

1383

Manufacturing

9(47.925)

0-90

0-98

23.101.542

թ-93

Թ Ի Ի Ր Ք Ա. Հ Ա. Յ Ա Ղ Է Տ Ը

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

Ա.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

† ՏԷՐ Մ . . . ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ Օ . . . Ի
ՆԱԽԻՆ ՊԱՏՐԱՐԲ ԹԻՐԲԵՆՑ ՀԱՅՈՑ

Նոր ծանօթութիւններով եւ յաւելումներով

Հրատարակեց

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ



Ս. ԷՋՄԻԱՅԻՆ

Արհարարաւոր Տպարան Մայր Աթոռում

1919

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ԵՆ ԻՄ ՀԵՏԵՒԵԱՒ
ՉԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1). Վասպուրականի Գրական Մշակներ. 500 էջ. — Յիսուս կենսագրականներ, քառասուն լուսանկարներ, ինքնագիր ստորագրություններ, անտիպ նամակներ, գրություններ և այլն:
- 2). Վասպուրական Աւելարհի Վարու Բնաբան. 300 էջ. — Քաղաքական, հասարակական, գրական և յեզագրական շարժումներու ամփոփ պատմություն, բնագործակ ներածություն:
- 3). Նահապետ Քուչակ. 150 էջ. — Նոր յայտնություններ, անհղություններ, Քուչակին վերադրուած հայերէն և թիւրքերէն անտիպ երգեր (150 տուն) և այլն. պատկերազարդ:
- 4). Մաղկաւաղ Վասպուրականի Հայ Ժողովրդական Բանակի ստրեան. Բ. փունջ. 200 էջ. — Ժողովրդական, աշուղական անտիպ երգեր, անհղություններ և այլն:
- 5). Հայրենի Յիւսէակներ. 250 էջ. — Բնաշխարհի փարք ու բարք, սովորոյթներ, անհղություններ, հին յուշեր, ուղեորի և ուխտաւորի ապաւորություններ, ճամբորդի նկարագրություններ և այլն:
- 6). Սեփեան Հայրիկ. 150 էջ. — Մահուան տանձակապ (1907 — 1917 հոկտ. 29) անտիպ նամակներ, անկատաներ, պատկերազարդ:
- 7). Սոսանուր Վ. Կոթուղիկոս Աղբամարայ. 160 էջ. — Աղթամարայ կաթնաղիտաթեան պատմութեան վերջին գրուածք:
- 8). Պատմագիտական Ուսումնասիրութիւններն ու Պեղումներ Վանի եւ Շրջակայքի մէջ. 1800 — 1917. 120 էջ:
- 9). Հայկական Հարցի եւ Թիւրքահայ Աղէտի մասին պատմական փաստաթղթեր:

Թ Ի Ի Ր Ք Ա Հ Ա Յ
Ա Ղ Է Տ Ը

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

Ա.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

+ ՏԷՐ Մ . . . ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ Օ . . . Ի
ՆԱԽԻՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԹԻՒՐԿԻՈՅ ՀԱՅՈՑ

Նոր ծանօթութիւններով եւ յանելուածներով

Հրատարակեց

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ

Ս. ԷԶՄԻԱՇԻՆ

Երկտաւաւած Տպարան Մայր Աթոռոյ

1919

1383



5 OCT 2011

9147.9257
0-90

87

ԵՄԻՆ

ԸՆԹԵՐՅՈՂԻՆ

Թիւրքահայ նորագոյն աղէտի (1915—1918) մասին իմ ձեռք բերած պատմական փաստաթուղթերը, այսուհետեւ մաս առ մաս լոյս կրնայեմ, առաջին պատեհութեամբ հրատարակ հանելով ի Տէր հանգուցեալ Տէր Մ... Արքեպիսկոպոս Օ...ի այս նշանաւոր և բաւական մանրակրկիտ տեղեկագիրը, որու վրայ իմ կողմէ աւելցուցի նաև կարգ մը կենսագրական համառօտ ծանօթութիւններ՝ յիշատակուած ծանօթ անձնաւորութեանց մասին, այլև իբրև յաւելուած մէջ բերի Տաճկահայաստանի կրօնական, հասարակական, յեղափոխական և գրական սպանուած կամ անհետացած կարգ մը անձնաւորութեանց անունները, որոնց մասին ու է յիշատակութիւն չը կայ տեղեկագրի մէջ: Հայկական վեց նահանգներու մէջ աքսորուած, սպանուած, խեղդամահ եղած և կախուած հասարակական գործիչներու մասին շատ քիչ տեղեկութիւններ կան մինչև այժմ: Այս տեղեկագիր կազմողը ի հարկէ անձամբ շրջագայած չէ յիշուած քաղաքները, գաւառները և այլն, բայց ինչպէս կերևի շատ վստահելի, պաշտօնական աղբիւրներէ հաւաքեք է իւր տեղեկութիւնները, որ համարձակած է տեղեկագիրը հրատարակ հանել և ուր որ պէտք է ուղարկել ի գիտութիւն:

Ինչպէս յայտնի պիտի ընէ տեղեկագիրը լոկ մանրամասն անուանացուցակի մը տպաւորութիւն կը թողու ընթերցողին վրայ, թէ և պիտի ըսեմ, որ այդ մանրակրկիտ անուանացուցակը, ճշտութեամբ կազմին ալ մեծ ուղժուարին աշխատանք մըն է, մանաւանդ պատասխանատու պարտականութիւն մը, որը ըստ կարելոյն յաջողութեամբ զուխ բերած է հանգուցեալ Օ... Արքեպիսկոպոսը:

Մեր գառի և աղէտի վերաբերմամբ, եթէ նման տեղեկագիրներ մենք շատ ունենայինք և լոյս ընծայէինք, ապաղայ պատմագիրն անպնտանառելի ծառայութիւն մը մատուցած պիտի գրեթէ ըլլար:



Այս տեղեկագիրը համազգային յարգանք և վստահութիւն վայելող Բարձր Անճնաւորութեան մը բարեհաճ թոյլտուութեամբ լոյս ընծայելով, աւելորդ չեմ համարեր յայտնել, որ առայժմ, տեղեկագրի հեղինակի բուն անունը բացէ ի բաց չեմ կրնար յայտնել, մինչև որ յարմար պարագայ և ժամանակ ներկայանայ:

Տեղեկագրիս հետ ես ուրիշ պատմական փաստաթուղթեր ալ պիտի հրատարակէի, բայց իմ նիւթական սուղ միջոցները, թոյլ չը տուին իրագործելու այդ նպատակը:

Իբրև տեղեկութիւն կը հաղորդեմ նաև հետևեալը: Անցեալ 1918 թուի դեկտ. 17/30-ի կիրակի առաւօտ Ազգիս Վեհափառ Կաթողիկոսի ներկայութեամբ Ս. Էջմիածնի տաճարին մէջ, Մայր Աթոռոյ միաբանութիւնը կատարեց պատարագ և վերջը հոգեհանգիստ, տաճկահայ նահատակուած հոգևորականներու յիշատակին: Որովհետև նախապէս յայտարարուած չէր, ուստի և հոգեհանգիստին ներկայ չէր հասարակութիւնը: Պատարագիչ Տէր Թադէոս վարդապետը «Քրիստոս որդի Աստուծոյ» աղօթքի մէջ յիշատակեց իսպառ անհետացած, սպանուած և մեռած 30 հոգևորականներու անունները: Աղօթքին կցուած էին նաև հետևեալ յուզիչ տողերը. «Պաշտօնէից Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, որք ի մահ վկայից փոխեցան առ քեզ և կատարեցան նահատակութեամբ ի ձեռս անօրինաց ի բանդս և յաքսորանս: Այլև յայտից և անյայտից ի հայրերաց եթէ յերկրի մերում եթէ ի տար աշխարհն ըստ ամենայն հասակի և չափու ծերոց և աղայոց, արանց և կանանց, կուսանաց և երիտասարդաց, աշխարհականաց և զինուորեալ մանկանց, որք կատեցան չարատանջ մահուամբ և նահատակեցան խոշտանգմամբ և դառն տանջանօք և եղին գանձինս ի պաշտպանութիւն հայրենեաց իւրեանց՝ և սուրբ կրօնից...»:

Տեղեկագրի մէջ յիշատակուած կան այնպիսի անձնաւորութիւններ, որոնք աքսորուած կամ անհետ կորած կը համարուին, բայց մեծամասնութիւնը մեր գրական և մանաւանդ հասարակական ու յեղափոխական գործիչներ:

2492-2002

21703

րուն, իսպառ կորած են, սպանուած, չարաչար տանջանքներով մահացած, բանդերու նկուղներու մէջ մեռած, խեղդամահ եղած, արտորավայրերու կէս ճամբուն նահատակուած և կամ ուղղակի գնդակահարուած են:

Չորրորդ տարին է, որ այդ անդառնալի մարդկային կորուստի մասին փաստեր և տեղեկութիւններ կը հաղորդէ հայ և օտար մամուլը:

Տեղեկագրի մէջ չը կան մանրամասնութիւնները Միջագետքի գաղթականութեան, Փոքր-Ասիոյ հայկական գաւառներու, տեղահանութեանց, կոտորածներու և այլնի մասին: Չկան վիճակագրական տեղեկութիւններ և թիւեր, տեղահանուած և կոտորուած հայերու մասին: Տեղեկագրի վրայ արձանագրուած չը կայ կազմելու թուականը, ամսաթիւր, տեղը, բայց ինչպէս մէկ քանի տեղ գրուած թուականները (1918) ցոյց կուտան տեղեկագիրը կազմուած է անցեալ 1918 տարուայ գարնան և ամռան ընթացքին:

Գուցէ դեռ վաղաժամ ու տարակուսելի էր այս տեղեկագրի հրատարակութիւնը, բայց տեղեկագիրը կազմողի մեծանուն և յայտնի անձնաւորութիւնը և վստահելի լինելու բուն համոզումը ինձ համարձակութիւն տուին լոյս ընծայել տեղեկագիրը, որուն մէջ եթէ նկատելի վրիպումներ կան իմ կողմէ, ընթերցողին ներողամտութիւնը կը խնդրեմ:

Աւելորդ չեմ համարեր յայտնել նաև, որ այս տեղեկագրի վաճառումէն զոյացած, զուտ արդիւնքը կյատկացնեմ Խրիմեան Հայրիկի անտիպ նամակներու և անեկտոտներու հրատարակութեանը: Այս նպատակի համար իմ արամագրութեան տակ կայ մօտ հինգ հարիւր (500) բուրջի գումար մը ևս, որը հանգանակուած է 1917 թուի նոյեմբ. 5-ին, Հայրիկի մահուան տասնամեակի առթիւ կազմակերպուած սգահանդէսի և երեկոյթի ժամանակ:

Հայկ Աճեմեան

Ս. Էջմիածին
1/14 Յունուար, 1919

ԱՆՅԱՅՏԱՑԵԱԼ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ *)

1915 գարնան եւ ամռան սպանուած կամ անհետ կորած

1. Սմբատ Եպիս. Սաստէթեան, տաբազարցի, առաջնորդ Կարնոյ, միաբան Արմաշու դպրեվանքին:
2. Յակոբ Եպիս Աշոտ-Փափագեան, պօլսեցի, Զմիւռնիոյ բանդին մէջ վախճանուած 1918-ի աշնան:
3. Խոսրով Եպիս. Պէրիկեան, զարացի, (Սեբաստիա) առաջնորդ Կեսարիոյ, միաբան Արմաշու դպրեվանքին:
4. Ներսէս Եպիս. Դանիէլեան**), առաջնորդ Եօղղատի, միաբան Սոյ մայրավանքին: Ներսէս Եպիս.-ը ծնած է 1868-ին, Զէյթունի Եարբուզ գիւղին մէջ: 1883-ին Սոյ մայրավանքը երթալով կըստանայ կրօնական կըրթութիւն: 1890-ին կը ձեռնադրուի վարդապետ: 1896-ին եօթ ամիս կը բանդարկուի Հալէպի մէջ, իբրև Զէյթունի ապստամբութեան պարագլուխ ամբաստանուելով: Բանդէն ազատուելէ յետոյ կաքսորուի Դամասկոս, ուրկէ կազատուի և Օրմանեան պատրիարքի երաշխաւորութեամբ Պօլիս կը բերուի, ուր 10 տարի Սկիւտարի քարոզիչ կը կարգուի: 1905-ի «Ելրզի դժոխային մեքենայի» դէպքին օրը կը

*) Դեռ շատ երկար է անյայտացեալ հոգևորականներու շարքը: Տեղեկագրի մէջ չը կան յիշատակուած Տաճկհայաստանի բազմաթիւ հայ վանքերու մէջ սպանուած վարդապետներու անունները, որոնց ստուգումը շատ դժուար պիտի լինէր տեղեկագիրը կազմողին համար: Հոգևորականներու կարգին մէջ կը մտնեն նաև հազարաւոր քահանաներ՝ սպանուած և անհետացած, որոնց մասին դարձեալ ստոյգ վիճակագրութիւն մը կազմելը անհնարին էր տեղեկագիրը կազմողին համար:

**) Կենսագրական տեղեկութիւնները իմն են:

Հ. Ա.

Հ. Ա.

ձերբակալուի և երեք օր կը բանդարկուի Ելզըզի պալատին մէջ:

1909-ի Կիլիկիոյ աղէտի և կոտորածներու ժամանակ դարձեալ կը բանտարկուի 3 1/2 ամիս: Հոգեւոյս Խրիմեան Հայրիկը այս յանդուզն և ազատասէր հոգևորականին կը շնորհէ «Սասկան վարդ» ծածկանուն և ականակուռ լանջախաչ:

Արկածալից և տառապալի կեանք մը ունեցած է, իր ամբողջ էութեամբ նուիրուած լինելով հայ ժողովրդի ազատագրման գործին, որուն համար ալ կենդանի նահատակութիւն կրեց:

Ներսէս Եպիս. յեղափոխական գործիչ ըլլալէ յետոյ, դրագէտի անուն ալ հանած էր: Տարիներով աշխատակից եղած է «Մասիս»ին, «Բիւզանդիոն»ին, «Մանդումէ»ին, «Սուրհանդակ»ին, «Արևի. Մամուլ»ին, «Հանրագիտակ»ին, «Ծաղիկ»ին և «Լոյս»ին: Անդրանիկ երկն է «Կեանք առանց հաւատք»ի քարոզագիրքը (տպ. Վիեննա. 1903): Անտիպ գործերէն կարևորներն են «Կիլիկիոյ Հայոց Գաւառաբարբառը», «Կաթողիկոսութիւն Հայոց Կիլիկիոյ», «Վերջին Լեոնի ողբերգը», «Արիւնոտ Ծրար» և այլն: Հրատարակուած գրքերու մէջ յիշատակելի է «Կաթիլ մը շուր այրած սրտերու» (տպ. Կ. Պօլիս. 1909):

5. Խորէն Եպիս. Դիմաքսեան, միաբան Սոյ մայրավանքին, առաջնորդ Կիւրինի:

6. Եգնիկ Եպիս. Գալբաքչեան, առաջնորդ Բալուի, միաբան Արմաշու դպրեվանքին:

7. Մկրտիչ վրդ. Զլդատեան, առաջն. տեղապահ Տիարբէքիրի, միաբան Արմաշու դպրեվանքին:

8. Սահակ վրդ. Օտաբաշեան, առաջն. տեղապահ Երզնկայի, միաբան Արմաշու դպրեվանքին:

9. Արտաւազ վրդ. Գալէնտէրեան, առաջն. Եղեսիոյ, միաբան Արմաշու դպրեվանքին:

10. Շաւարշ վրդ. Սահակեան առաջ. Եւզոկիոյ, արմշկն.

11. Պսակ » Տէր Խորէնեան » Խարբերդի »

12. Սուրէն վրդ. Գալէմեան*) առաջն. Բաղէշի արմշկն.

13. Գեղամ » Թէվէքէլեան » Կեղուայ »

14. Համազասպ վրդ. Եղիսէեան » Սամսոնի »

15. Գէորգ » Թուրեան » Տրապիզոնի »

16. Անանիա վրդ. Հազարապետեան, առաջն. Բաբերդի, Երուսաղէմի միաբան:

17. Մելքիսեղէկ վրդ. Հովիւեան, առաջն. Կամախու, Երուսաղէմի միաբան:

18. Կարապետ վրդ. Յակոբեան, վանահայր Կոնոնոսի վանուց, Երուսաղէմի միաբան:

19. Երեմիա վրդ. Լիֆօրեան տեսուչ Բէյրութի Եր. մըն.

20. Սահակ » Սարգիսեան » » » »

21. Յովսէփ » Սօղօմոնեան » Անտիոքայ » »

22. Սահակ » Զօրակեան Սոյ միաբան.

23. Բարսեղ » Մանկրեան » »

24. Վարդան » Յակոբեան**), առաջն. տեղապահ Մշոյ, ս. Կարապետի վանահայր:

25. Կորիւն վրդ. Սրապեան, փոխ առաջն. Բասենի, ս. Կարապետի միաբան:

26. Ներսէս վրդ. Տէր Բարդուղիմէոսեան, արմաշական.

27. Յովհաննէս վրդ. Մավեան »

28. Վաղինակ » Թորիկեան առաջնորդ Շաբին-Գարահասարի:

29. Աբգար վրդ. Եօթնեղբայրեան, փոխառաջն. Խնուսի.

Ծանօթ. 1918-ի ամռան թիւրքերու ձուլքով սպանուեցան Մայր Աթոռի միաբան Սիօն վրդ. Տէր Մանուէլեան (Հին Նախիջևանի յաջորդ) և Խոր Վիրապի վանուց տեսուչ Աւագ արեղան: Հ. Ա.

*) Սուրէն վրդ.ը սպանուած է Բիթլիսի մէջ, ըստ ականատեաներու վկայութեանց: Հ. Ա.

**) Սպանուած Մշոյ մէջ:

Կ. ՊՕԼՍՈՅ ՄԷՋ ԿԱԽԱՂԱՆ ՀԱՆՈՒԱԾ ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆՆԵՐԸ*)

(2/15 յունիս 1915)

1. Մատթէոս Սարգիսեան (Փարամազ) Կովկասահայ.
2. Բ.ժ. Պէննէ Թորոսեան, խարբերդցի.
3. Արամ Աչըբբաշեան, արաբկերցի.
4. Յակոբ Գազազեան, վառնացի.
5. Յակոբ Պասմաշեան, քիլիսցի.
6. Հրանտ Եկաւեան բժ. ուսանող.
7. Գեղամ Վանիկեան, վանեցի, իրաւաբան.
8. Երուանդ Թօփուզեան, պարտիզակցի.

Սօց. գեմ. Հնչակեան յայտնի յեղափոխական գործիչներ:

9. Վարդան Գրլճեան, բիթլիսցի.
10. Վահան Պոյաճեան, չմշկածագցի.
11. Արմենակ Համբարձումեան, վաճառական.
12. Թովմաս Թովմասեան, ուսուցիչ.
13. Մկրտիչ Երէցեան, խարբերդցի.
14. Յովհաննէս Բէրդազարեան, ուսուցիչ Կեսարիոյ.
15. Պօղոս Պօղոսեան, ակնցի.
16. Աբրահամ Մուրադեան, կօշկակար.
17. Գարեգին Պօղոսեան, շաբին-գարահիսարցի.
18. Գառնիկ Պոյաճեան, առևտրական.

*) Աստուծոյ 18 հոգի կախուցեան իբրև նախարարներու դէմ մահափորձեր ծրագրողները, բոլորն ալ Հնչակեանները, որոնց պատճառով ձերբակալուեցան և բանդարկուեցան նաև վեց վիլայէթներու մէջ գտնուող բոլոր ակնյայտնի հնչակեանները:

Գաւառներու մէջ 1914-ի աշնան հնչակեանները խիստ հաւածանքի ենթարկուեցան թիւրք կառավարութեանը կողմէ, որը շատ բռնի միջոցներ ձեռք առաւ և շարաշար կերպով պատժի ենթարկեց դատապարտեալ և ձերբակալուած հնչակեանները:

Հ. Ա.

19. Հրանտ Աղաճանեան, կարնեցի, կախուած 1916-ի յունուար 5/18-ին դատապարտուելով իբրև ուսուցիչ և վարուցիչ գաղանի լրտես և գործակալ:

20. Խորէն Պրէմեան ատարագարցի.

21. Կարապետ Պոտուրեան, ուսուցիչ, պարտիզակցի.

22. Գրիգոր Գորեան, ատարագարցի.

Այս երեքը կախուած են 1916-ի մարտ 1/14-ին իբրև զէնք թագցնողները:

23. Սարգիս Նազարէթեան, օրխանփելեցի, կախուած. 1918 մայիս 11/24-ին, իբրև դատաւիբ գինուոր:

Կ. ՊՕԼՍԷՆ ԱՔՍՈՐՈՒԱԾՆԵՐԸ*)

1. Տ. Զաւէն Արքեպ. Տէր Եղիայեան**), բաղդատցի, Արմաշի դպրեվանքէն, Պատրիարք Թիւրքիոյ Հայոց, աքսորուած էր Պօլսէն—Բաղդատ, բայց այժմ կը գտնուի Մուսուլ:

2. Դանիէլ Արքեպ. Յակոբեան Պօլսէն—Երուսաղէմ.

3. Մկրտիչ Եպիս. Աղաւնունի » »

4. Երուանդ վրդ. Փէրտահճեան, պատրիարքական փոխանորդ, Պօլսէն—Երուսաղէմ:

5. Կարապետ վրդ. Մկրտիչեան Պօլսէն—Երուսաղէմ.

6. Հմայեակ » Բաղդասարեան » »

7. Յոհան » Կարապետեան » Մուրաք.

8. Պարզև » Դանիէլեան » Տէրղօր.

9. Սմբատ » Տիրացուեան, Կեսարիայէն—Հոլմա?

10. Սարգիս » Աճէմեան, Պիլէճիքէն—Գօնիա.

*) 1915 գարնան Պօլսէն աքսորուած. կրօնական հասարակական, յեղափոխական և գրական գործիչները 250 հոգի եղած են, որոնցմէ 92 հոգի տարուած են Այաշ, Անկիւրիա «և անհետացած են, մնացեալներ Փոքր Ասիոյ մէջ ցրուած և միայն 25 հոգի դարձած են»:

**) Այստեղ յիշուած են միայն յայտնի և աչքառու անձնաւորութիւնները:

Հ. Ա.

11. Գրիգորիս վրդ. Պալաքեան*) Պօլսէն—Տէրգօր-այժմ անյայտ:

12. Բարթող վրդ. Թոքաճեան, Չէյթունէն—Հալէպ:

13. Մեսրոպ » Ամատունի, Սիսէն—Հալէպ:

14. Գասպար—Չերազ, պօլսեցի, (յայտնի հասարակա-կան գործիչ և յազգ. պատուիրակութեան անդամ, Մինաս Չերազի եղբայրը) Պօլսէն—Սուրաբ:

15. Միքայէլ Շամտանճեան, ազգային գործիչ, Պօլսէն—Գոնիա:

16. Երուանդ Օտեան**), պօլսեցի, արսորուած Պօլսէն—Տէրգօր—Գոնիա: Օտեանը թիւրքահայ գրականութեան մէջ անուն շահած է իբրև երգիծարանի և զաւեշտագրի: Հասարակական անունի գործիչ և հրապարակագիր է, «Երօտ» ծածկանունով: Ծնած է 1869-ին Կ. Պօլսոյ մէջ, հօրեղբոր որդին է հասարակական մեծանուն գործիչ Գրիգոր Օտեանի: Աշխատակից էր պօլսահայ «Մասիս», «Արևելք», «Հայրենիք» և ուրիշ թերթերու: Պանք-Օթօմանի ցոյցէն յետոյ (1896 օգոս.) կը փախչի Աթէնք և կը խումբագրէ «Միութիւն» թերթը: Ապա կանցնի Եգիպտոս, Փարիզ այստեղ կը հրատարակէ «Ազատ Խօսք» ամսաթերթը (4 թիւ): Թափառաշրջիկ և արկածալից կեանք մը ունեցած է: Ինքը անձամբ հրատարակած է բազմաթիւ թերթեր: Ունի վէպեր, և թատերական կատակերգութիւններ: Պէյքօզի Ազգ. Երեսփոխանն էր և Ազգ. Երեսփ. Ժողովի Գ. ատենագլխիւրը:

17. Թէոդիկ (Թէոդոս Լաբճինճեան) պօլսեցի, արսորուած Պօլսէն—Ատանա: Թէոդիկը թիւրքահայ գրակա-նութեան մէջ անուանի է իւր «Ամէնուն Տարեցոյց»-ներով: Խիստ հետաքրքիր բովանդակութեամբ, աղուոր զեղար-ուեստական տպագրութեամբ այս տարեցոյցները սեզանի

*) Իզմիրլեան Կաթուղիկոսի, կաթուղիկոսական պատուի-րակ (1909). հեղինակ «Անիի Աւերակներուն Նկարագրութիւն» պատմական պատկերազարդ երկասիրութեան: Հ. Ա.

**) Ըստ վերջին տեղեկութեանց («Չանդ» 1919 № 19) Ե. Օտեանը եկած է Պօլիս: Հ. Ա.

և մատենագարանի արժանի զարդ են: Թէոդիկը իւր մեղ-ուաջան աշխատասիրութեամբ և բանահաւաքութեամբ շատերու համակրանքին և քաջալերութեան արժանացած էր: Իւր ամուսինը՝ տիկ. Արշակունի Թէոդիկը յայտնի գրագիտուն է, հեղինակ «Ամիս մը ի Կիլիկիա» (Կիլիկիոյ 1909-ի ազէտի տպաւորութիւնները) գրքին: (տպ. Կ. Պօլիս):

18. Արամ Անտոնեան, պօլսեցի, արսորուած Պօլսէն—Հալէպ: Անտոնեանը իբրև գրագէտ և խմբագիր և վերջերս գաւեշտագիր՝ բաւական տեղ գրաւած էր մեր գրա-կանութեանը մէջ: Անոր խմբագրութեամբ հրատարակող «Լոյս» շաբաթաթերթը (1908) շահեկան բովանդակութիւն մը կը ներկայացնէ ընթերցողին: Ծնած է Պօլիս և յաճախ իր մասնակցութիւնը բերած է հասարակական գործերուն:

19. Սարգիս Սրենց, պօլսեցի, յայտնի տաճկաբան, հրապարակախօս, արսորուած է Պօլսէն—Գոնիա:

20. Պարզև Փափագեան պօլսեցի, դրամատան համա-րակալ, արսորուած է Պօլսէն—Հալէպ:

21. Երուանդ Թօլայեան, (Կավոօշ) պօլսեցի, արսո-րական Պօլսէն—Նապլուս: Թօլայեանը կը հրատարակէր «Կավոօշ» գաւեշտաթերթը, որը երբեմն շատ բաց յայտ-նութիւններ և մամուլի անվայել մերկացումներ տուաւ հասարակական բարքերու մասին: Այնուամենայնիւ իբրև սկսնակ զաւեշտագիր Թօլայեանը ապագայ կը խոստանայ:

22. Պատուելի Պաշատուր Գոուզեան, վանեցի, ար-սորական Պօլսէն—Հալէպ: Վանի գաւառներու մէջ ուսուց-չական պաշտօններ վարելէ յետոյ, Գոուզեանը անցաւ Պօլիս և բողոքական հայոց մէջ վարեց քարոզչի պաշտօն, ապա կարգուեցաւ տեսուչ Կիլիկիայի և Հալէպի որբա-նոցներուն: Իբրև հասարակական գործիչ և յեղափոխական գաղափարները տարածող արսորուեցաւ: Հրատարակած ունի «Աստուծոյ Տուն» կրօնական գրքոյկը: Աշխատակից եղած է «Աւետարեք» «Բիւզանդիոն» և ուրիշ թերթերու: 1890 թուին Աղթամարի Պաշատուր Կաթուղիկոսին հետ կը կազմեն ընդարձակ պատմական տեղեկագիր մը Աղթա-մարի թեմի հարստահարութեանց և բռնութեանց մասին:

ՀՈԳԵՒՈՐ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ*)

- Տ. Տ. Սահակ Վեհ. Կաթուղիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ.
1. Եղիշէ Եպիս. Չիլիկիւրեան, տեսուչ Դամասկոսի.
 2. Կարապետ » Մազլումեան, առաջն. Պանտրմայի.
 3. Պետրոս » Սարաճեան » Հաճընի.
 4. Գրիգորիս » Պոյաճեան, միաբան Երուսաղէմի.
 5. Մովսէս » Ոսկերիչեան, առաջ. Անտիոքայ.
 6. Ստեփաննոս Արքեպ. Յովակիմեան » Նիկոմիդիոյ.
 7. Գիւտ Արքեպ. Մխիթարեան, Կաթուղիկոսի առեւտրայ.
 8. Տրդատ Եպիս. Պալեան, նախկին առաջն. Կեսարիոյ.
 9. Մաղաքիա » Տէրունեան » Բաղդատի.
 10. Մեսրոպ » Նարոյեան, վանահայր Արմաշու.
 11. Գարեգին վրդ. Խաչատուրեան, առաջնորդ Գոնիայի, Արմաշական:

12. Դաւիթ վրդ. Տէրտէրեան, Լուսարարապետ Երուսաղէմի:

Մանօր. Աքսորավայրէն, Հոգ. Ժողովի որոշմամբ վերագարձան 2-րդ, 3-րդ, 5-րդ, եպիսկոպոսներ և 11-րդ վարդապետը, որոնք Հոգևոր Ժողովի անդամներ էին: Երուսաղէմի մէջ մնացեր են, 6-րդ, 7-րդ եպիսկոպոսներ և 12-րդ վարդապետը: Աղէտի ընթացքին միշտ Պօլսոյ մէջ եղած են 8-րդ, 9-րդ և 10-րդ եպիսկոպոսները:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՕՆ ԿԸ ՎԱՐԵՆ

Մատթէոս Եպիս. Ինճէեան, առաջնորդ Զմիւռնիոյ:

Փառէն վրդ. Մելքոնեան, Արմաշական, առաջնորդ Բաղդատի:

*) Թիւրքիան՝ տաճկահայերու յարաբերութիւնը Կովկասահայութեան և Էջմիածնի Մայր Աթոռի հետ իսպառ խզելու համար, 1916-ին տաճկահայոց համար յատուկ կաթուղիկոս նշանակեց, Կիլիկիոյ Տէր Սահակ Կաթուղիկոս Խապայեանը, որը կազմեց իւր Հոգևոր Ժողովը, մեկուսանալով Դամասկոսի մէջ, Ի հարկէ Թիւրքիոյ այս քմահաճ կարգադրութիւնը, չի կրնար մեզ բաժանել Ամենայն Հայոց Հայրապետութենէն: Հ. Ա.

Կ. ՊՕԼՍՈՅ ՄԷՋ ԱՊՐՈՂ (1918) ՀՈԳԵՒՈՐ ԱԿԱՆՆԵՐԸ

1. Գարրիէլ Արքեպ. Ճէվանիրճեան, Պատրիարքական փոխանորդ և առաջնորդ Կ. Պօլսոյ:
2. Մաղաքիա Արքեպ. Օրմանեան, նախկին պատրիարք*)
3. Եղիշէ » Դուրեան, նախորդ »
4. Յովհաննէս » Արշարունի »
5. Վահրամ Եպիս. Մանկունի քարոզիչ Օրթագիւղի.
6. Հմայեակ » Դիմաքսեան » Բերայի.
7. Մաղաքիա » Տէրունեան » Գատր գիւղի.
8. Մեսրոպ » Նարոյեան » Պէշիկթաշի.
9. Վահան վրդ. Յակոբեան, քարոզիչ Կէտիկ փաշայի.
10. Եղիշէ » Գալֆայեան » Եէնի Քափուլի.
11. Մմբատ » Գաղաղեան, տեսուչ կալուածոց Երուսաղէմի:
12. Վրթանէս վրդ. Քարլպճեան, հոգ. պաշտօնեայ պետական անկեղանոցի:
13. Սարգիս վրդ. Տէր Սարգիսեան, քարոզիչ Գումքափուլի գուբաի:
14. Մարկոս վրդ. Գարագաշեան քարոզիչ Պէյքօզի.
15. Արսէն » Գէորգեան » Գանտիլիի.
16. Գէորգ » Իբրանոսեան » Գուրուշէճմէի.
17. Հրանտ » Յովասափեան » Յէրի գիւղի.
18. Կոմիտաս » Սօղոմօնեան, միաբան Մայր Աթոռոյ, յայտնի երաժշտագէտ և երգիչ, հիւանդ:

ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ**)

(Սպանուած, խեղդամահ եղած, աքսորի մէջ մեռած կամ իսպառ անհետացած)

1. Գրիգոր Զօհրապ.—Մնած է Պօլսոյ Պէշիկթաշ գիւղին մէջ 1861-ին: Հազիւ միջնակարգ կրթութիւն

*) Ըստ լրագրական տեղեկութեանց Օրմանեանը մեռած է: Հ. Ա.
**) Կենսագրական տեղեկութիւնները իմս են: Հ. Ա.

ստացած, 17 տարեկան, գրական ասպարէզ կիջնէ 1878-ին, խմբագրականներ և հրատարակագրութիւններ գրելով «Լրագիր» օրաթերթի մէջ: Հետզհետէ կը կաշխատակցի ժամանակակից հայաթերթերուն, մինչև որ 1893-ին Հ. Ասատուրին հետ կը հրատարակեն «Մասիս»ը իբրև գրական հանդէս, որը ապա Զօհրապը կը վերածէ օրաթերթի և կը շարունակէ քանի մը տարի ևս հրատարակել: Զօհրապը «գրական թեթևակի կրթութիւն էր ստացեր, բայց շնորհիւ իւր ինքնագորգացման և բնատուր բարձր կարողութեանց» դարձաւ ինքնատիպ և տաղանդաւոր գրագէտ: Մեր գրականութեան Գի դը Մօպասանէ Զօհրապը: Իւր գրական համբաւը տարուէտարի աւելցաւ: 1911-ին լոյս տեսան անոր նորավէպերու երեք հաւաքածոները «Լուռ Ցաւեր», «Կեանք ինչպէս որ է» և «Սղճմտանքի Չայներ»:

Զօհրապը համբաւ հանած էր նաև իբրև պերճախօս փաստաբանի: Այս կարողութեամբ օժտուած նա ընտրուեցաւ Օսմ. պարլամենտի Պոլսոյ պատգամաւոր 1908 ին և 1912 ին: Իբրև հասարակական գործիչ ալ Զօհրապը առաջին տեղ կը գրաւէր թրքահայոց Ազգ. գործերու մէջ, Ազգ. Երեսփոխանական և Քաղաքական ժողովին անդամակցելով: 1915—1916 մամուլը Զօհրապի աքսորման և սպանութեան մասին բազմաթիւ չը ստուգուած տեղեկութիւններ հաղորդեց թէև, բայց զժբաղտաբար, անոր անդառնալի կորուստը այժմ արդէն փաստ է: Վերջին տեղեկութեանց համաձայն Զօհրապը մեռած է աքսորի ճամբուն:

2. Ռուբէն Զարգարեան*) — Անհետացած գրական գործիչներու շարքին մէջ իւր լուսաշաղախ կերպարանքով կը ներկայանայ Ռուբէն Զարգարեանը: Խորբերդի մէջ ծնած է Զարգարեանը 1874-ին: Նախնական ուսումը քաղաքի ազգ. վրժ.ի մէջ կը ստանայ: 1903-ին իբրև յեղափի.

*) Զարգարեանի տիկինը իւր չորս որդիներու հետ 1915-ի ամառն Պուլկարիայի վրայով Թիֆլիս եկան: Գրագէտի որդին Ռաֆայէլը՝ իւր զգայուն գրուածքներով երեցաւ Կովկասահայ մամուլին մէջ: Հ. Ա.

գործիչ կը ձերբակալուի, բայց շուտով կազատուի և կանցնի Իզմիր, վարելով Մանիսայի ազգ. վարժարանի տեսչութիւնը: 1905-ին կանցնի Պուլկարիա և Յիլիփպէի մէջ կը հրատարակէ «Ռագմիկ» թերթը: 1908-ին Օսմ. Սահմանդրթ. հռչակումէն յետոյ կանցնի Պոլիս և 1909-ին կը հիմնէ «Ազատամարտ» մեծ օրաթերթը, վարելով անոր խմբագրապետութիւնը: Զարգարեանի «Ազատամարտ»ը մեծ գեր կատարեց մեր հասարակական կեանքի մէջ, 1909—1914:

Զարգարեանը աշխատակցած է 1890—1915 Պոլսահայ թերթերուն, իր քերթուածներ և նորավէպերը հաճոյքով կը կարդացուէին: 1910-ին հրատարակեց իր նորավէպերու ժողովածուն «Յայգալոյս», որը թարգմանուած է Ֆրանս.ի անգլ.ի և թուրք.ի:

«Զարգարեան իբր յեղափոխական—կըսէ տիկ. Զապէլ Եսայեանը—իւր սիրտը կապած է ժողովուրդին սիրտին և իբր գրագէտ իր միտքը կապած է ժողովուրդին միտքին: Ժողովուրդին զաւակն է Զարգարեանը»:

3. Սիամանթօ — Ասոմ Եարհանեան. — Դիւցազնօրէն երգեց ու երկնեց, դիւցազնօրէն ապրեցաւ մեր գրական ասպարէզի մէջ, բայց նամարդի ձեռքով անհետացաւ՝ անդառնալի կերպով: Ծանր է գրել անոր կորուստի մասին՝ բայց ինչ ընենք որ ստիպուած ենք:

Սերատոիոյ Ակն գիւղաքաղաքի մէջ 1877-ին ծնած է Սիամանթօն: 1890-ին Պոլիս գալով կը ստանայ միջնակարգ կրթութիւն և ապա 1896-ի բանքայի ծանօթ դէպքի ժամանակ, երբ կը հետախուզուի կանցնի ժընև, և այստեղն է, որ կը հրաշակերտէ իւր փառապանձ քերթուածները մտցնելով անոնց մէջ «Խրոխտ, քրմային լեզու, դասական մեծապանձ շարժումներ»: Իւր ամբողջ քերթուածները հրատարակուեցան 1911-ին Ամերիկայի մէջ «Ամբողջական Գործ» խորագրով: Դաշնակցութեան նորագոյն ականաւոր գործիչներէն և հայ գրականութեան վեթերաններէն մէկը կը հանդիսանար Սիամանթօն:

4. Դանիէլ Վարուժան — Զբուժեարեան. — Թիւրքահայ

նորագոյն գրականութեան հոյակապ բանաստեղծ էր Դ. Վարուժանը, նախաքրիստոնէական հայկական կեանքի, հին ու պատմական գեղարուեստի, փառքի ու հրաշալիքներու, բազմիւններու, մեհեաններու և հին աստուածներու հրաշագան երգիչը: Տխուր լուրեր հաղորդեցին անոր կորուստեան մասին, ըսին թէ «թշնամիք ստիպեցին Վարուժանին, որ իր իսկ ձեռքով փորէ իւր գերեզմանը: Փորեց, իջցուցին գերեզմանին մէջ և գնդակահարեցին...»: Յետոյ ըսին թէ «Վարուժանը կը թափառի Արաբիոյ և Միջագետքի անապատներու մէջ, ոտաբորիկ, գլխաբաց, մազերը երկար թևերու վրայ փռած, սպիտակ երկար շապիկ հագած, մօրուքը կուրծքին փռուած, հաստ ու երկար ձեռնափայտը ձեռքին»: Երանի թէ ողջ լինէր թող այս բանաստեղծական, գէրվիշական վիճակի մէջ գտնուէր, թերևս իրեն համար հաճելի էր անապատային ու մռայլ այդ կեանքը:

Վարուժանը ծնած է Սեբաստիոյ Բրգնիկ գիւղին մէջ 1884-ին: Նախնական ուսումը ստանալէ յետոյ կանցնի Վենետիկ և Միսիթարեան միաբանութեան մօտ կը կատարելագործէ հայերէն ու ֆրանսերէն լեզուները: Ապա կանցնի Բելգիա և կը ստանայ բարձրագոյն կրթութիւն:

1908-ի Օսմ. Սահմանադրութիւնէն յետոյ Վարուժանը վերագարձաւ իւր հայրենիքը, վարեց ուսուցչական և հասարակական գործեր, ապա տեղափոխուեցաւ Պոլիս, ազգ. վարժարաններու մէջ, հայերէն, գրականութեան և այլ դասեր ստիպ: Գրական գործունէութիւնը կանուխէն սկսած է: Սկզբնական հրատարակութիւններն են՝ «Աստուածներ», «Զարդը» «Յեղին Սիրաը» (1910 Կ. Պոլիս): Վարուժանը 1913-ին հրատարակեց իր երկերու գլուխ գործոցը՝ «Հեթանոս երգեր» (տպ. Կ. Պոլիս): 1914-ին Վարուժանը Յ. Ճ. Սիրունիի հետ հրատարակեց «Նաւասարդ» գեղարուեստական ու գրական տարեգիրքը: Թիւրքահայ լաւագոյն գրական հանգէսներու մշտական աշխատակիցն էր Վարուժանը, որը զեռ շատ մեծ ապագայ կը խոստանար:

5. Տիգրան Զեօկիւրեան. — Ծնած է 1884-ին Կիւմիւղիսանէի մէջ: Եղած է որդեգիր Գաղատիոյ Կարմիր վանքի մէջ: 1903-ին կաւարտէ Կ. Պոլսոյ Պէրպէրեան վարժարանը, ուր յետոյ կը վարէ ուսուցչական պաշտօն, դասաւանդելով, պատմութ. աշխարհագրութ. և օտար ազգաց գրականութիւն:

Գրական ասպարէզ իջած է 1905-ին, գրելով նորավէպեր և քննադատականներ: Հրատարակուած երկերն են, «Հայրենի Զայներ» նորավէպերու ժողովածուն և «Վանք» վէպը (1913. տպ. Կ. Պոլիս): 1914-ի յուլիսին Վան եկաւ Հայաստանի մէջ ուսումնասիրական պատյաններ կատարելու նպատակով, բայց հաղիւ 10 օր մնաց, երբ պատերազմը յայտարարուեցաւ: Հապճեպով հեռացաւ Վանէն և գնաց էրզրում: Այդ երթալն էր որ գնաց: Տ. Զեօկիւրեանը մեր նորագոյն գրականութեան անխոնջ յառաջապահներէն մէկը կը հանդիսանար:

Եւուանդ Մեմալէ Շիւանիւեան. — Ծնած է Պոլիս, 1870-ին: Սան կեդրոնական վարժարանին: Կանուխէն աշխատակցած է «Արևելքին» և «Ճէրիտէի Շարգիլէ»ին, ժողովրդական նորավէպերով: 1896-ին կանցնի Վանուս և այնտեղ կը հրատարակէ «Շարժում» և «Շաւիղ» թերթերը, միևնոյն ժամանակ ուսուցչական պաշտօններ վարելով: Իբրև գրագէտ և հրատարակագիր կարևոր տեղ կը գրաւէր: Հրատարակած է (1913) «Հարագատ Որդի» վէպը:

Մելիօն Կիւրեան — Հրակց. — Ծնած է Բալուի Հաւալ գիւղը 1859-ին: 1870-ին Պոլիս կուգայ և կը սովորի Սիկեւտարի ձեմարանին մէջ: 1878-էն յետոյ պաշտօնավարած է Պոլսոյ ազգ. վարժարաններու մէջ: 1899-ի ղէպքերուն կը փախչի Վանուս, ուր ի յիշատակ իւր շատ սիրելի Գր. Արծրունուն կը բանայ «Արծրունեան վարժարան»: 1898-ին Պոլիս կուգայ, ուր ձեռքբաղաւ իր կաբոնրի Գասթէմունի: Աքսոր կը մնայ 10 տարի, մինչև որ 1908-ին կազատուի: Աշխատակից եղած է Պոլսոյ և արտասահմանի հայ թերթերուն գրելով նորավէպեր «Պանտուխաներու Կեանքէն»: Իբրև հասարակական և գրական գործիչ յայտնի անձնաւորութիւն մըն էր:

1005
21703



Բժ. Ռուբէն Զիլինկիւրեան—Ռ. Սեւակ.—Ծնած է 1885-ին Միլիվրի մէջ: Նախնական կրթութիւն այնտեղ ստանալէ յետոյ կանցնի Պարտիզակ, ապա Պոլիս, ուր և 1905-ին կաւարտէ Պէրպէրեան վարժարանը: Անցնելով Զուիցերիա, կուսանի բժշկութիւնը: Իր գրուածքներու մէջ Մարդկութեան, Սիրոյ և Հայրենիքի գաղափարը կը փառարանէ: «Փրցուած էջեր բժշկի կեանքէն» նորավէպերու շարքը 1913—1914-ի «Ազատամարտ»ի մէջ, մեծ ազմուկ հանեց: 1910-ին լոյս ընծայեց «Կարմիր Գիրքը»ը Ատանայի եղեռնէն ազդուած: Ունի սնտիպ ձեռագիրներ: Նկարագրական ու պատմողական շատ գեղեցիկ ու պատկերաւոր ոճ և լեզու ունի:

Սմբատ—Բիրատ.—Պոլսեցի, վերակազմեալ Հնչակեան գործիչ: Թիւրքահայ գրականութեան Ատրպետը:

Ունի մեծածաւալ, բազմաթիւ վէպեր, հայ յեղափոխութեան մասին: «Բանդէ Բանդ», «Ելալդէ Սասուն», «Վեղարաւոր Հերոսը», «Աւարայրի Արծիւ» (թատերգութիւն) և այլն իւր հրատարակութեանց մէջ կարևոր տեղ կը զբաւեն:

* *

Դարեգին Ասածակ.—Կովկասահայ, ալէքսանդրապոլցի. բարձր. ուսումն ստացեր է Փրանսիայի մէջ: Դաշնակցական ականաւոր գործիչ, բեմբասաց, երկար տարիներ ուսուցիչ եղած է Թիֆլիսի Ներսէսեան դպրոցի մէջ: Հեղինակ, թարգմանիչ, հասարակագէտ, հրապարակախօս, «Ազատամարտ»ի խմբագրական կազմի անդամ, պատմագէտ: Դաշնակցութեան յայտնի տեսաբան: Հրատարակած է պատմական, հասարակագիտական և թարգմանական բազմաթիւ գրքեր: Խմբագիր Թիֆլիսի «Յառաջ»ին և ապա ասոր յաջորդող բոլոր Դաշնակցական թերթերուն:

Յարութիւն Շահրիկեան.—Տրապիզոնցի, հին Դաշնակցական գործիչ, հրապարակագիր: Կ. Պոլսոյ Հ. Յ. Դ.-եան Կեդր. Կոմիտէի, Քաղաքական Ժողովոյ և «Ազատամարտ»ի խմբագրական կազմի անդամ:

Ա. Վուամեան—Օճճիկ Դեռձակեան.—Ծնած է Պոլսոյ մէջ, սովորած էջմիածնի Ճեմարան, ապա նետուած հասարակական ասպարէզ: Դաշնակցական յայտնի գործիչ, հռետոր, հրապարակագիր: Տարիներով գործեր է Ամերիկայի, Կովկասի և Տաճկահայաստանի մէջ, ամեն տեղ ալ հրապարակ բերելով իւր բազմակողմանի ընդունակութիւնները իբրև ազգային, հասարակական և յեղափոխական գործիչի: 1912-ին ընտրուեցաւ Օսմ. պարլամենտի Վանի պատգամաւոր: 1914-ին, պատերազմի յայտարարութենէն յետոյ արդէն Վանի մէջ կը գտնուէր, տենդագին աշխատանքներ նուիրելով հասարակութեան: 1915-ի ապրիլ 4-ի շաբաթ օր, ցերեկը, Վանի կուսակալ արխրահոջակ ձէվաթ բէյը Վուամեանը իւր տունը կը կանչէ ուր և դաւադրութեամբ բանտարկել կուտայ: Փիշերը ձերբակալուած կը տանեն նաւահանգիստ, ուրկէ ծովով կը փոխադրեն Բիթլիս, ուր և Պօտանսու գետի կամուրջի վրայ շարշարանքներով կը սպանեն և դիակը կը ձգեն գետի մէջ:

Վուամեանը Վասպուրականի մէջ, ժողովրդական մեծ համբաւ ու համակրանք շահած էր:

Է. Ակնունցի—Սաչասուր Մալումեան.—Կովկասահայ. ծնած է Մեղրիի մէջ: Բարձր. ուսումը ստացեր է Ռուսաստանի մէջ: Դաշնակցական նշ. գործիչ: Գրիգոր Արծրունու սիրելի աշակերտներէն մէկը. հին «Մշակ»ի աշխատակից: Հ. Յ. Դաշնակցութեան Արևել. Կեդր. Բիւրօյի անդամ: Յայտնի հռետոր, հեղինակ «Կովկասեան Վէրքեր», «Իէպի Կուր» և այլն հայերէն և ֆրանսերէն գիրքերու: «Ազատամարտ»ի խմբ. կազմի անսամ, ուսուցիչ, հասարակական գործիչ և այլն: Գրեթէ միշտ եղած է արտասահման, Եւրոպա և աշխատեր է յօգուտ հայ գաղին:

Վարդգէս—Յովհաննէս Սերինկիւրեան.— Կարնեցի, Դաշնակցական, յեղափոխական և հասարակական յայտնի գործիչ, տարիներով հալածուած, և տաճկական բռնու-

թեանց ենթարկուած անձնաւորութիւն մը, որը կրցաւ իւր անուանը միշտ բարձր պահել և վայելել մեծ ժողովրդականութիւնը՝ Վասպուրականի և Բարձր Հայքի հայ ժողովրդի մէջ: Օսմ. պարլամենտի Կարնոյ պատգամաւոր:

Սարգիս Մինասեան.— «Իրօջակ»ի և «Ազատամարտ»ի խմբագիրներէն, Դաշնակցական գործիչ, տեսուչ Պօլսոյ երկրորդական վարժարաններէն մէկուն:

Բժ. Նազարէթ Տաղաւարեան.— Ծնած է Սեբաստիոյ մէջ: Օսմ. խորհրդարանի Սեբաստիոյ պատգամաւոր, հեղինակ «Հայոց Հին կրօններ», «Ուրուագիծ Պատմութեան Հայոց», «Ծագումն Հայ Տառից» (պսակուած Իգմիրեանց մրցանակով) «Գրիգոր Աղաթօն» պատմական այլ և մօտ քսան կտոր բժշկական—զիտական տպագրուած երկասիրութեանց:

Բժ. Կարապետ Սան Փառեան.— Օսմ. խորհրդարանի Իգմիրի պատգամաւոր: Հասարակական, ազգային նշանաւոր գործիչ. հեղինակ «Իպրոցական Առողջապահութիւն» երկարաշունչ, մանրակրկիտ և զիտական ուսումնասիրութեան (680 էջ): Երկար տարիներով գործեր է Ատրպատականի և Պարսկաստանի մէջ, հետզհետէ մեծ յարգանքի և պատուի արժանանալով:

Սարգիս Սուին.— Սիւնիկիւնեան.— Ծնած է Պօլսոյ Պէշիկթաշ գիւղին մէջ. 1870 թ. շրջանաւարտ Պօլսոյ պետական վարժարանէն: 1896-ին ձերբակալուած է իբրև Իգմիրեան պատրիարքի և օտար թղթակիցներու յարաբերութեանց միջնորդ: Ատանայի կոտորածներէն յետոյ այնտեղ գացեր է երկու անգամ, կազմելով ընդարձակ տեղեկագիրներ և ոճիրի յանձաւորները հրապարակելով: Ինքն է որ Մերօինի մէջ հիմնած է Կիլիկեան անդրանիկ որբանոցը: Իտալացի նշ. գիտնական Լօմպոզոյի վարդապետութեան (զիմագիտութիւն և զանկարանութիւն) հետեող մըն էր, որով քաջ զիմագէտ և հմուտ զանկարան մըն էր: Դաշնակցական գործիչ և Ազգ. Երեսփ. ժողովի անդամ:

Սուրաս — Համարձում Պօյանեան.— Սեբաստացի, Հըն-

չակեան կուսակցութեան հիմնադիրներէն. հին յեղափոխական անուանի գործիչ, որը հայ յեղափոխութեան պատմութեանը մէջ իւր արժանի տեղն ունի: Օսմ. պարլամենտի Սեբաստիոյ պատգամաւոր:

Յարութիւն Ճանկիլեան.— Վանեցի, հին Հնչակեան ըմբոստ գործիչ, որը միշտ հալածուեր է Սուլթան Համիտի հրամանով: Հայ յեղափոխութեան երեսուն տարուայ պատմութիւնը «Յիշատակներ Հայկական Ճգնաժամէն» խորագրով հրատարակեց 1913-ին (տպ. Պօլիս, երեք հատոր): Ազգ. Երեսփոխանական ժողովի անդամ:

Ներսէս Փափագեան.— Վանեցի, (Նախկին Մաշթոց վարդապետ, Եղբայր Վրթանէս և Վահան Փափագեաններու) «Ազատամարտ»ի խմբագիրներէն. Դաշնակցական գործիչ:

Տիգրան Գօնդօրեան.— (Նախկին Մեհրուժան վարդապետ) ուսուցիչ, Դաշնակցական գործիչ:

Ժաֆ Սայապալեան.— Պօլսեցի, հրապարակագիր, զրագէտ, հասարակական գործիչ:

Արիսակէս Գասպարեան.— Կիլիկեցի, Ուսումնական ժողովի նախագահ, Ազգ. Երեսփոխ. ժողովի անդամ, աշխատակից «Բիւզանդիոն» օրաթերթի. յայտնի փաստաբան:

Բժիշկներ՝ Ստեփան Միսաբեան և Գագագեան:

Տիրան Քէլէկեան.— Պօլսեցի, «Մապահ» (Առաւօտ) թիւրքերէն օրաթերթի խմբագիր, հասարակական գործիչ, պետական բարձրագոյն վարժարաններու պրօֆէսօր:

Հայկ Թիրեաբեան.— Պօլսեցի, տպարանատէր, հրատարակիչ, 1896-ի Օսմ. բանքայի դէպքի յայտնի հերոսներէն:

Թեխանեան? Յեղափոխական-հասարակական գործիչ: Ներսէս Զաֆարեան.— Պօլսեցի, Ազգ. Երեսփոխ. ժողովի անդամ:

Բարթող Զօրեան.— Կ. Պօլսոյ Հ. Յ. Դեան Կեղր. Կոմիտէի անդամ, յեղափոխական գործիչ:

Միհրդադ Հայկազն.— Դաշնակցական գործիչ, Երեսփոխ. ժողովի անդամ: Մինչև 1908 թ. արտորական էր:

Բարսեղ Շահբազ.— Դաշնակցական գործիչ, հրապարակագիր:

Սամուել Սամուելով.— Կովկասահայ (հաւանաբար Վանի մէջ երկար տարիներ գործող ծանօթ Սարգիս Բարսեղեանն ըլլայ) Դաշնակցական յայտնի գործիչ:

Գրիգոր Թորոսեան.— Կիլիզ.— Պօլսեցի, խմբագիր «Ծաղիկ», «Կիլիզ» և «Կիլիսո» զաւելջառաքելութեան հասարակական գործիչ և լրագրող:

Գրիգոր Մեցնիկեան. խմբագիր, Գեորգ Թէրեխմանեան վաճառական, Սերովբէ Նորասունկեան մշեցի, Եսուարդ Բէյլագեան շերամագործ, Ռոսոսմ Ռոսոսմեան վաճառական, բոլորն ալ տաճկ. կառավարութեան կողմէ ճանչցուած էին իբրև յեղափոխական և վտանգաւոր անձնաւորութիւններ:

ԱՂԵՏԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՄԵՌԱԾ ՆՇԱՆԱԻՈՐ ԹԻԻՐՔԱՀԱՅԵՐԸ*)

1915 Ապրիլ.— Ներսէս Եպիս. Խաբախանեան**), Առաջն. տեղապահ Մշոյ, վանահայր ս. Կարապետի վանուց: Ծնած է Մշոյ մէջ 1845-ին: Ս. Կարապետի վանքի մէջ կը ստանայ իւր ուսումը, կը ձեռնադրուի վարդապետ: Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտրութեան, Մուշի հայ ժողովուրդին կողմէ պատգամաւոր կուգայ էջմիածին, 1892-ին:

1896-ի ծանօթ գէպքերու ժամանակ կը բանտարկուի իբրև յեղափոխական գործիչ և կը ճամբուի Պօլիս, ուրկէ ալ կաքսորուի Երուսաղէմ, 12 տարի: Օսմ. Սահմանա-

*) Կենսագրական համառոտ տեղեկութիւնները իմս են:

**) Խաբախանեան Եպիս.-ի անունը չը կայ յիշուած տեղեկագրի մէջ:

դրութիւնէն յետոյ Իզմիրլեանի հետ Պօլիս կուգան: 1909-ին Իզմիրլեան Կաթողիկոսի ձեռքով եպիսկոպոս կը ձեռնադրուի:

Անձնուէր, անկաշառ և ազատամիտ եպիսկոպոս մըն էր: Մշոյ դաշաի 1915-ի անաւոր աղէտը չը տեսած, վախճանեցաւ բժաւոր տիֆով, 70 տարեկան հասակի մէջ: 1916 Օգոստ. 10.— Յովհաննէս Հիսարլեան, պօլսեցի, բանասէր, հեղինակ:

1917 փետր. 27.— Տիգրան Թասպասեան, պօլսեցի, դերասանապետ:

Մարտ 24.— Յակոբ Գորեան, պօլսեցի, վաճառական, Ազգ. Երեսփոխ. Ժողովի անդամ:

Մայիս 20.— Յարութիւն Ասլանեան, պօլսեցի, վաճառական, Ազգ. Երեսփոխ. Ժողովի անդամ:

Աննա Էսայեան, պօլսեցի, խնամակալ Էսայեանց մայրը:

Թովմաս Եսայեան, պօլսեցի, բանասէր, սեղանաւոր:

✓ Մկրտիչ Անէմեան.— Բանաստեղծ. ծնած էր Կ. Պօլսոյ մէջ 1838-ին: Աշակերտած է Հ. Ղևոնդ Ալիշանի: Երկար տարիներ հեռադրատան մէջ պաշտօն վարելէ յետոյ 1909-ին հանդատեան թոշակի կը կոչուի: Գրական ասպարէզ իշած էր 1875-ին: Առանձնացեալ և մենակեաց ապրիլ շատ կը սիրէր և իր այդ խաղաղ կեանքին մէջն ալ կը բանաստեղծէր, արտադրելով հետեւեալ երկերը (ապագրուած) «Վահագն» (գրարատ զիւցագնեբզութիւն) «Ժպիտ և արտասուք», «Լոյս և Ստուերք», «Գարնան Հովեր», «Թըրթուոն Չայներ» և այլն: Մեռաւ խոր ծերութեան մէջ, 79 տարեկան:

1918 յունուար 3.— Յարութիւն Ալէքսանեան, պօլսեցի, դերասանապետ:

Յունուար 8.— Նշան Ղուկասեան, պօլսեցի, քիմիագէտ, պրօֆէսոր բժշկական դասընթացքներու:

Փետր. 23.— Աբրահամ փաշա Երամեան, պօլսեցի, ծերակուտական:

Փետր. 27.— Մատթէոս Ունձեան, պօլսեցի, բարերար, առևտրական:

Մարտ 26.—Հ. Մեսրոպ վրդ. Մահակեան*), վենետիկի Մխիթարեան միաբանութեան մեծաւոր, բազմաշխատ կրօնաւոր:

Ապրիլ 4.—Գէորգ Ապտուլլահ, պօլսեցի, գիտնական, պատմագէտ, բանասէր, լուսանկարիչ, աշակերտ Հ. Ղ. Ալիշանի:

Հ. Ռափայել վրդ. Մխաւէրեան, Կ. Պօլսոյ Անտոնեանց միաբանութեան անդամ:

Օր. Եւփիմէ Օսեան.—Ծնած Պօլիս 1847-ին, քոյրը մեծանուն հասարակական-զրական գործիչ Գրիգոր Օտեանի: 1878-ին մեկնած է Փարիզ, Նիս, 1882-ին Ճօրձօվա, ուր և ֆրանսերէնէ հայերէնի կը թարգմանէ «Արքա Գօնաթանդէն» նշանաւոր վէպը, որուն յառաջաբանը գրած է Գր. Օտեանը: Իբրև ուսուցչուհի երկար տարիներով պաշտօնավարած է Պօլսոյ և Իզմիրի ազգ. վարժարաններու մէջ: Թիւրքահայ գրագիտուհիներու մէջ առաջնակարգ տեղ կը գրաւէր:

Դաւիթ Գալէնտէրեան, պօլսեցի, ուսուցիչ և տեսուչ:

Տիկին Պայծառ Տայեան, պօլսեցի, տեսչուհի:

Թաղուր Կարակէօզեան, պօլսեցի, սեղանաւոր:

Ստեփան Սպարթալեան, պօլսեցի, գրամատէր:

Յակօր Պօյաճեան, ծնած Տիգրանակերտի մէջ 1837-ին: Նախ տղարանատէր և հրատարակիչ եղած է, և ապա պետական տպարանի վերատեսուչ կարգուած է: 1889-ին բողոքական հայոց «ազգապետ» ընտրուեցաւ և այդ պաշտօնը տարաւ մինչև կեանքի վերջը:

Սիմէոն Սեղբոսեան, պօլսեցի, բժշկապետ, և Ազգ. երեսփոխանական ժողովի ատենապետ:

Օր. Մարի Մուկէնտիսեան, բարեգործութեանց անխոնջ աշխատող:

Յովհաննէս Խան Աբշարեան, պարսկական զեսպանատան Ա. քարտուղար:

*) Հեղինակ «Գաղտնիք վենետիկոյ» գրքին. ապ. 1909 Վենետիկ:

Կարապետ Արաբեան, բարեգործ, վաճառական:

Տիգրան Բարաղամեան, Ազգ. Խնամակալութեան անդամ:

Բարսեղ Ստամբօլցեան, վաճառական և բարերար:

Մովսէս Եպիսկոպոս, Գրիգորիս Արքեպ. Յովհաննէսեան, Ադան վրդ. Համամճեան, արմաշական:

1918-ի աշնան վախճանած է Տէր Մաղափա Աբեպ. Օրմանեան, նախկին պատրիարք Թիւրքիոյ Հայոց, նշանաւոր եկեղեցական գործիչ, յայտնի հսկասոր, մեծ գիտնական, գրամշակ, հեղինակ, թարգմանիչ, Աստուածաբան, պատմագիր: Ծնած է Կ. Պօլիս 1841 ին: 1863-ին Հ. Ետուարդ Հիւրմիւզի ձեռքով կը ձեռնադրուի քահանայ. գեռ երիտասարդ հասակի մէջ փիլիսոփայութեան և օրէնսգիտութեան տօքտօրութեան աստիճան կը բարձրանայ: 1879-ին կը դառնայ հայ եկեղեցոյ գիրկը: Այնուհետև առաջնորդական պաշտօններ կը վարէ զաւառներ: 1886-ին, Սրուանձտեանի հետ եպիսկոպոս կը ձեռնադրուին Մակար Կաթողիկոսէն: Իբրև ուսուցիչ մեծ դեր կատարած է, բաւական է յիշել Արմաշու գալրեվանքին մէջ անոր կրթած սերունդը, եօթ տարուայ ընթացքին, 1889-էն մինչև 1896-ը, երբ արդէն թիւրքահայոց պատրիարք ընտրուեցաւ և այդ կոչման վրայ մնաց մինչև 1908-ի յուլիս 16-ը: 1908—1918 Օրմանեանը ինքզինք նուիրեց գրական և հասարակական գործունէութեան: Իւր բազմաթիւ հրատարակուած գիրքերու զլուխ գործոցն և թագն ու պսակը կը կազմէ «Ազգապատում» երկու հատոր հոշակաւոր երկասիրութիւնը, որը լոյս ընծայեց հանգ. Սուքիաս Արքեպ. Պարգեանցը:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ*)

Երուսաղէմի վանքը կը գտնուէին 50 վեղար(աւոր) 12 ուրար(ակիր) 150 աշխատաւոր և 25 մայրապետ: Պետական հրամանով ելլողները եզան միայն 8 վեղար(ա-

*) Կը հրատարակուի նոյնութեամբ, ինչպէս որ կայ բնագրի մէջ: Հ. Ա.

ւոր) և 1 ուրար(ակիր): Վանքը բնաւ նեղութիւն ու
Քաս և զրկանք չը կրեց*): Միայն ուխտաւորական և
կալուածական հասոյթներու դադարում եղաւ և անհնա-
րին թանկութիւն տիրեց, տնտեսական վիճակը և ապ-
րուսար շատ ընկաւ, պարտքեր շատցան, կալուածներ
վաճառուեցան:

Կաթուղիկոսին (հիլիկիոյ Տ, Տ. Սահակ Խապայեա-
նը) Երուսաղէմէ մեկնելով վարչութիւնը բաժանաբար
յանձնուեցաւ. եկեղեցականը՝ Դաւիթ վարդապետի, յա-
րարեականը՝ Գիւտ Եպիսկոպոսի, և տնտեսականը՝ Մաք-
սուտեան Ասոնգ վրդ-ի, զոր Խապայեան կաթուղիկոսն իւր
բարեկամը առջի օրէն բերաւ և նորէն գործի գլուխ ան-
ցուց... իշխանութեամբ:

Երուսաղէմի բնիկ ժողովուրդը և տարագրեախներն
ալ Քաս և զրկանք չը կրեցին: Պատուաւոր տարագրեալ-
ներէն, եկեղեցականաց պարագաներէն և զինուորական
պաշտօնէից ընտանիքներէն և մաս մըն ալ կարօաներէն
իբր 400 հոգի վանքին մէջ կը բնակէին:

Փառանգաւորաց վարժարանը փակուեցաւ, աշակեր-
տաց մեծամասնութեան զինուորագրուելով, որոնք աորդ-
չապահութեան զործածուեցան տանապետի աստիճանով:

Դամասկոս եկող ուրարաւորն է, Վարդան սարկաւազ
Գէորգեան, կաթուղիկոսի փոքրաւորը:

Մանօթ.— Տեղեկագիր կազմողը պատերազմի ընթացքին
այցելած է Երուսաղէմը և ուրիշ քանի մը քաղաքները: Հ. Ա.

ՕՍՄ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ՊԱՇՏՄԵՆՆԵՐԸ

1918 թուին

ԾԵՐԱԿՈՅՏ (Մէջիսի այստ)

Չարեհ Տիլբէր, Մանուկ Ազարեան, Արամ, (Յովա-
կիմ Երեմեան):

*) Պէտք է գիտնալ որ այս տեղեկութիւնները կը վերա-
բերին 1915—1918 թուականներուն, պատերազմի ընթացքին: Հ. Ա.

ՕՍՄ. ՊԱՐԼԱՄԵՆՏ (Մէջիսի մէպուսան)

Պարլամենտի հայ անգամները (Երեսփոխանները):
Պետրոս Հայաձեան՝ Կ. Պօլիս, Օննիկ Իհասն՝ Զմիւռ-
նիա, Տիգրան Պարսամեան՝ Սերաստիա, Մատթէոս Նալ-
բանեան՝ Սիս, Յարութիւն Պօշկէզէնեան՝ Հալէպ, Յակոբ
Խէրլաքեան՝ Մարաշ, Յովսէփ Մատթեան՝ Կարին, Գե-
ղամ Տէր Կարապետեան՝*) Մուշ:

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (Շուրայր Տէվլիք)

Գաբրիէլ Սերվիշէն, Էլեմտական բաժին, Հրանտ
Ասատուր,**) օրէնսդրական բաժին:

ԵՊԱՐՔՈՍՈՒԹԻՒՆ (Մէտաւք)

Սարգիս Գարաքօշ, օրէնսգիրքերու կազմութեան
պետը:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Խարիճիէ)

Հրանտ պէյ Ապրօ, իրաւագէտ խորհրդական, Պօղոս
էֆ. Քէրէստէճեան, առաջին օգնական: Անդրէաս Հա-
սուն, օտար թղթակցութեանց զիւանի տեսուչ, Ներ-
սէս Պապեան՝ օգնական: Լեոն պէյ Սուրէնեան, արձա-
նագրութեանց զիւանի գեր տնօրէն: Երուանգ Եուսուֆ-
եան, Մամլոյ զիւանին օգնական... Փիշմիշեան էֆ.
պաշտօնէից զիւանի քարտուղար: Լեոն պէյ Երամեան՝
Փարիզի ղեսպանատան քարտ.: Հրանտ պէյ Նորատուն-
կեան Պելկրատի ղեսպանատան առաջին քարտուղար:

ԱՐԴԱՐԱՂԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Աղլիէ)

Վոամշապուհ Մանուկեան, վճարեկ ատեանի ան-
ղամ, Յարութիւն Մոստիշեան, վերաքննիչ ատեանի ան-
ղամ, Արթուր Մաղաքեան և Միսակ Մակարեան, Բերայի

*) Ըստ լրագրական վերջին տեղեկութեանց («Ձանդ» 1919
№ 19) Մշոյ Գեղամը մեռած է Պօլսոյ մէջ: Թիւրքահայ գաւա-
սիկ գրականութեանը մէջ Գեղամը պատուաւոր տեղ կը զբաւէր,
իբրև գաւառիկ գրող: Հ. Ա.

**) Թիւրքահայ գրականութեան հինաւուրց և յայտնի ղեմ-
քերէն: Հ. Ա.

զատարանի անդամները, Արզուման Արզումանեան, վիճակագր. զիւանի տեսուչ, Լևոն Լաթիֆեան, Բերայի զործարարութեանց անօրէն:

ԵԼԵՒՄՏԻՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Մալիէ)

Մինրան Գարագաշ, Սերովբէ Պերպերեան, Արմենակ Սաքրզ, Ներսէս Ազարեան, Ստեփան Արապեան, Յովհ. Փանոսեան, Թազուր Թազուրեան, Յովհ. Արիսեան, Գէորգ Յովհաննէսեան էֆէնախներ՝ բարենորոգմանց ժողովի անդամներն են: Խորէն էֆ. Ճամճեան երամտական քննիչ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պետրոս պէյ Սորասանճեան և Յովհաննէս էֆ. Քարտաշեան իրաւագէտ խորհրդականներ:

ԿԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Մէարիճ)

Յարութիւն էֆ. Յովհաննէսեան, բարձրագոյն դասընթացքներու դասախօս,....*) էֆ. Ճիլալեան զիւանի պաշտօնեայ:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Զրաաք)

Միմոն էֆ. Բիւշիւքեան, անասնոց համաճարակի զիւանի պետը, Միքայէլ էֆ. Էքշեան, անտառաց վարչութեան զիւանի անօրէն:

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ (Փօսքա)

Մէնէվիշ էֆ. Կ. Պօլսոյ մանտափօսաային զիւանի օգնական: Կրօն էֆ. Կեռագր. քննութեանց զիւանի զեր անօրէն: Լևոն էֆ. Կեռագր. սակերու զիւանի օգնական:

Կ. ՊՕԼՍՈՑ ՔԱՂԱՔԱԳԼԽՈՒԹԻՒՆ (Պէլէտիէ բէյիսի)

Զարեհ էֆ. Տէր Ներսէսեան, ճարտարապետ, զիւանական ճիւղի զեր անօրէն: Արմենակ էֆ. Աստարճեան, Ներսէս էֆ. Ճիւպերեան օգնականներ: Հրանտ էֆ. Տայեան, Հրանտ էֆ. Գուլումճեան և Նշան էֆ. Զենօրեան՝ զճագրողներ, Ներսէս էֆ. Վասիլեան՝ Գարթալի, Յակոբ

*) Բնագրի մէջ անուան տեղը կախման կէտեր կան:

էֆ. Ունճեան՝ կղզիներու և ժաք էֆ.....*): Բերայի երկրաչափներու փոխանորդները:

Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հմայեակ էֆ. Սոսրովեան՝ իրաւագիտութեան դասախօս, Յովհաննէս էֆ. Շահնազար՝ Համալսարանի դասախօս, Յակոբ էֆ. Պօլաճեան՝ համարակալութեան դասախօս, Յովսէփ էֆ. Ճէլալեան՝ բժշկական վարժարանի զեղազորութեան ուսուցիչ, Ճիվան պէյ Անանեան՝ բժշկական վարժարանի մասնագիտութեան ուսուցիչ, Հրանտ և Յարութիւն՝ եղբայրք Գասպարեանք սակերչապեաներ:

Կ. ՊՕԼՍՈՑ ՄԷՋ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ՊԱՇՏՈՆԵԱՆՆԵՐԷՆ ՀԵՏԵԻՆԱԼՆԵՐԸ

Յովհ. էֆ. Ասասեան, Սարբերդի կուսակալի օգնական:

Յովհ. էֆ. Ֆէրիտ Պօլաճեան, Վանայ » »

Մմբատ էֆ. Տէր Ներսէսեան, Բաղէշի » »

Յակոբ էֆ. Համամճեան, Տիարբէքլի » »

Թազուր էֆ. » վերաքննիչ ասեանի անգամ:

Գասպար էֆ. Նեմցէ, Կ. Պօլսոյ կուսակալութեան երկրաչափ:

Ստեփան էֆ. Գարայեան, վճռաբեկ ասեանի անգամ, ասենապետ Քաղաքական ժողովոյ:

Թորեր էֆ. Սազրճեան, նախարարական վիճակագրութեան զիւանի պետը:

Գարրիէլ էֆ. Նորատունիկեան, յայտնի պետական զործիչ, նախկին արտաքին զործոց նախարար, օրէնսգէտ, խորհրդական, միջազգային մեծանուն անձնաւորութիւն:

Պետրոս Զէքի պէյ Կարապետեան, յայտնի լեզուագէտ, օրէնսգէտ, պետական խորհրդարանի օգնական, հեղինակ բազմաթիւ թիւրքերէն հրատարակութեանց (բառարան, դասագիրք և այլն):

Նշան էֆ. Ճիվանեան, օրէնսգէտ, խորհրդարանի օգնական:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Օ... Արքեպ-ի տեղեկագրի մէջ, ինչպէս յիշած եմ, հայկական վեց նահանգներու մէջ տեղի ունեցած կոտորածներու, տեղահանութեանց, հասարակական, ազգային գործիչներու սպանութեանց, աքսորի և այլնի մասին և և է տեղեկութիւն չըկայ:

Մեր գիտցածն ալ, յիշեալ վեց նահանգներու (Վասպուրականէն զատ) մասին շատ աննշան է: Այս քանի մը էջերու մէջ ես կը ներկայացնեմ մասնաւորապէս Վասպուրականի հասարակական գործիչներու կորուստը, չը մտնելով յիշատակել նաև քանի մը տամեակ հասարակական-գրական գործիչներու ցան ու ցրիւ անուններ, միւս հինգ նահանգներէն:

Ա.

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ*)

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

(Անլուր չարչարաններով սպանուած 1915-ի ապրիլին)

1. Մատթէոս վարդ. Խաչատուրեան, Կարճկանի Ուրանից վանքի վանահայր**):

*) Վան քաղաքի, Շատախ գաւառի, և Փէսանդաշա գիւղախումբի 1915-ի ապրիլեան ինքնապաշտպանողական կռիւներն և դիմադրութիւնները և ապա հայ կամաւորներու և սուսական զօրքի մուտքն ի Վասպուրական, խուճապի և փախուստի մասնեցին Վանի նահանգի թիւրք ժողովուրդն ու զօրքը: Վասպուրականի հայութիւնը զրեթէ մեծ մասով ազատուեցաւ, բայց 1915-ի յուլիսին սուս. հին ութիմին դաւադրութեամբ սարքուած նահանջին՝ զաղթեց Կովկասը: Հ. Ա.

***) Վարդապետ—վանահայրերը բոլորն ալ սպանուած են իրենց վանքերու մէջ: Հ. Ա.

2. Պետրոս վարդ. Գրիգորեան, Խիզանի Ս. Խաչ վանքի վանահայր:
3. Յովսէփ վարդ. Թովմասեան, Ռշտունեաց Ս. Թովմա վանքի վանահայր:
4. Երեմիա վարդ. Խաչատուրեան, Ռշտունեաց Չարանի Ս. Նշան վանքի վանահայր:
5. Պօղոս վարդ. Տէր Կարապետեան, միաբան Աղթամարայ Ս. Խաչ վանքին:
6. Ղևոնդ վարդ. Յովհաննէսեան, Խիզանի Եօթն Խորան վանքի վանահայր:
7. Եղիա վարդ. լուսարարապետ Կտուց Անապատի:
8. Պօղոս » Յակոբեան միաբան » »
9. Ներսէս սարկաւազ » » »
10. Եղիշէ վարդ. Մովսէսեան, Ալշաւազի Ս. Սքանչելագործ վանքի վանահայր:
11. Վրթանէս վարդ. Տէր Սարգիսեան, Վարդայ վանքի վանահայր:
12. Արիստակէս վարդ. Մանուկեան, միաբան Վարդայ վանքի:

Ծանօթ.—Վասպուրականի կուսակրօն հոգևորականներէն ազատուած են ճետեհաբները. Եգնիկ ծ. վրդ. Ներկարարեան, Աղթամարի նախորդ կաթողիկոսական փոխանորդ*) Վանի առաջնորդական տեղապահ, այժմ էջմիածին: Դանիէլ ծ. վրդ. Չատոեան, Արմաշական, Աղթամարի միաբան, այժմ էջմիածին: Յովհաննէս վրդ. Հիւսիան, Լիմ-Անապատի վանահայր, այժմ Բաղդատ: Մահակ վրդ. Ստոմեան, Լիմ-Անապատի միաբան, այժմ Բաղդատ: Մատթէոս վրդ. Աճէմեան, Լիմ Անապատի միաբան, այժմ Պարսկաստան: Պետրոս վրդ. Կտուց Անապատի միաբան, այժմ Երևանի շրջան: Ստեփան վրդ. Կտուց Անապատի միաբան, այժմ Բաղդատ, Եղիշէ վրդ. Խէրանեան, Վանի Ս. Կարմրաւոր վանքի վանահայր, այժմ էջմիածին:

*) Աղթամարի կաթողիկոսական նախկին փոխանորդ Յովսէփ Արքեպ. Խոստեղեանը 1915-ի յուլիսի սկիզբը վախճանեցաւ Լիմ Անապատ վանքին մէջ:

Հ. Ա.

Արճէշի առաջօրդական փոխանորդ Տէր Եղիշէ և Նօր-
զուզի Ս. Հոգոց վանքի վանահայր Տէր Վահան քահանա-
ներն ևս սպանուած *) են:

Յիշատակութեան արժանի են նաև 1915-ի գաղթին
Երևանի և Էջմիածնի մէջ մեռած Վանի քահանաները—Վանի
երբեմնի առաջն. փոխանորդ Մեսրոպ աւագ քահանայ
ձանիկեան, Խրիմեանի աշակերտ, յայտնի հայկաբան, գա-
ւառիկ գրող, հեղինակ՝ Խրիմեան Հայրիկին ձօնուած ժո-
ղովրդական «Հայրիկ Հայրիկ» երգին: Յուսիկ քահանայ
Փէրրիգեան, Ղևոնդ քահանայ Սաֆրաստեան, Խորէն քա-
հանայ Նորաշէնի:

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍՐԱՆՍԱԿԱՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

(Սպանուած, իսպառ անհետացած եւ մեռած)

ԹՈՐՈՍ-ԳԱՅՈՒՍ ԱՂՕԵԱՆ.— Կովկասահայ, Իաջնակ-
ցութեան համեստ ու գործունեայ գործիչներէն մէկը,
որը Խանասորի նշանաւոր արշաւանքի հերոսներէն ըլլա-
լու պատիւն ունէր: Ինքն էր որ հեղինակած էր յայտնի
ժողովրդական երգը—«Կարկուտ տեղաց Խանասորայ դաշ-
տումը»: Թորոսը Վանի շրջանի մէջ յայտնի անձնաւո-
րութիւն մըն էր, ամենքէն սիրուած: 1914-ի նոյեմբերի
սկզբին երբ Վանէն կը հեռանար գէպի Կովկասը, Հին
Բայազիտի մօտ կըսպանուի, Վանի կուսակալ իթթիհա-
տական Թահսին բէյի զաւազրութեամբ:

ԻԵՐԱՆ—ՆԻԿՈՂԱ ՄԻԲԱՅԼԻԵԱՆ.— Կովկասահայ, ծնած
է 1882-ին Ղարաբաղի Գաղասնի գիւղը: Պատանի հա-
սակէն կը նեաուի յեղափոխական ասպարէզը և 1903-ին
արկածալից թափառումներէ յետոյ կանցնի Վանի շրջան,
ուր կըսկսի հիմք դնել յեղափոխական եռանդուն գործու-
նէութեան մը: Իւր շնորհիւ գիւղերու մէջ կազմուեցան
մարտական, պինական բազմաթիւ խումբեր, բացուեցան

*) Հազարաւոր սպանուած գիւղական քահանաներ կան:

զպրօցներ: Իշխանը տարիներով յեղափոխականի տառա-
պալից կեանք վարելէ յետոյ 1908-ի Օսմ. Սահմանա-
գրութենէն յետոյ հասարակական ասպարէզ իջաւ, շարու-
նակելով իր եռանդուն գործը: Յեղափոխական ըլլալէ յե-
տոյ Իշխանը բանաստեղծ ալ էր, գերասան, երգիչ և գե-
ղարուեստից սիրահար, անձ մը, որ այնքան ազդեցութիւն
թողած էր իւր շրջապատի վրայ: Իւր գործունէութեան
կեդրոնը Վանն ու Վասպուրականը եղան: 1915-ի ապրիլ
3-ի ուրբաթ իրիկուն իր երեք թիկնապահներու հետ
(Միհրան, Վահան, Պօղոս) երբ Վանէն Շատախ կերթար
հայ թրքական ընդհարումներուն վերջ տալու, Հայոց
Չորի Հիրճ գիւղին մէջ, Վանի կուսակալ Ջէվանթ բէյի
զաւազրութեամբ կըսպանուին Իշխանն ու իւր ընկեր-
ները: Վանի ապրիլեան կռիւներէն յետոյ անոնց նեխած
ու այլանդակուած դիակները Վան բերին և փառաշուք,
համաժողովրդական յուզարկաւորութեամբ թաղեցին Իաշ-
նակցութեան Վանի պանթէոնին՝ Արարուց եկեղեցոյ գե-
րեզմանտանը մէջ:

ՄԻՒՐԱՆ ԹԷՐԻԿՄԷԳԵԱՆ.— Ծնած է Վանի մէջ 1887-ին:
Նախնական կրթութիւնը հայրենիքին մէջ ստանալէ յե-
տոյ 1900-ական թուականներուն կանցնի Էջմիածին և
Խրիմեան Հայրիկի հոգացողութեան արժանանալով կըն-
դունուի Ճեմարան, ուր կը դառնայ տիպար և ընդօրի-
նակելի աշակերտ մը: 1906-ին փայլուն վիպականով կա-
ւարտէ Ճեմարանը և կը դառնայ Վան, ուր ուսուցչական
պաշտօններ կը վարէ Սանգիստեան և Կեդրոնական վար-
ժարաններու մէջ: 1908-ի ծանօթ դէպքերուն իբրև յե-
ղափոխական գործիչ կը ձերբակալուի և երեք ամիս կը
մնայ բանտ: 1909-ի յուլիսին կանցնի Պօլիս և ասկէ
Սօֆիա, Հ. Յ. Իաջնակցութեան Զ-րդ ընդհ. ժողովին
մասնակցելու համար: Ժողովը վերջանալէ յետոյ կանցնի
Գերմանիա, բարձրագոյն կրթութիւն ստանալու համար:
Տարի մը կը մնայ Ննայի, իսկ երեք տարի ալ Հայքցիքի
համալսարանին մէջ, սովորելով պատմութիւն, մանկա-
վարժութիւն և փիլիսոփայութիւն: Ուսումը աւարտելէ

յետոյ 1913-ին կը վերադառնայ հայրենիք և կը նշանակուի Կեդրոնական գաղտնի տեսուչ: 1914-ի ամռան էրզրումի մէջ կը գումարուի Հ. Յ. Դաշնակցութեան Լ-րդ ընդհ. ժողով, որուն դարձեալ Միհրան մասնակցելու կերթայ, իբրև Վանի պատգամաւոր: Համերոպական պատերազմը ծագելէ յետոյ, կամովին թիւրքական բանակը կը մտնէ, զինուորական ծառայութիւն կատարելու համար: Անոր կորուստի մասին վերջին ստոյգ տեղեկութիւնը հաղորդեց Ռոստոմը (Ստ. Զօրեան). ըսելով որ «սպանուած է»:

Իբրև թարմ և երիտասարդ ուժ Միհրանը դեռ շատ օգտակար պիտի ըլլար հասարակութեան:

Ասօ—Տիգրան Օսեան.— Ծնած է Վանի մէջ 1878 թուին: Դեռ գաղտնի տարիքի մէջ, բայց բմբոստ ու ազատամիտ պատանի մըն էր: Թիւրքական ծանր ուժի մին չը կրնալով տոկալ կանցնի Ատրպատական, ուր և կընդգրկէ յեղափոխական ասպարէզ, դառնալով Հնչակեան կուսակցութեան գործիչ և պրօպականդիստ:

1907-ին Ատրպատականէն կուսակցական գործերով կանցնի Բագու, Թիֆլիս և ապա 1908-ին Պոլիս (երբ Օսմ. Սահմանազրութիւնը հռչակուած էր) ուր և 1909—1910 թ. կը հրատարակէ «Երկիր» թերթը: Ունի նաև հեղինակութիւններ. «Վահէ», «Դատաստան», «Յօթն Հոգի», «Դարձեալ Մէկը» և «Կարմիր Օրեր», վերջինս իր երկերու մէջ ամենատարժեքաւորն է, որը կը պարունակէ 1896-ի Վանի ինքնապաշտպանութեանց կռիւներու մանրամասնութիւնները, իբրև ականատեսի պատմութիւններ: Ասօն աշխատակցած է բողոքաթիւ հայաթերթերու: Վերջին տարիներ Հնչակեաններու կարևոր գործիչներէն էր: 1914-ին ձերբակալուեցաւ*), իբրև թիւրքիոյ նախարար-

*) Ասօյի հետ ձերբակալուեցան նաև Արտ. Սօլաքեան, Արքանամ Բրուտեան, Կարապետ Տանթէեան և Հայկակ Էրէմիշեան Վանի Հնչակեան գործիչներ: Արք. Բրուտեան և Հ. Էրէմիշեան մեռան թրքական զինու. հիւանդանոցի մէջ, իսկ Արտաշէս և Կարապետը Ասօյի հետ սպանուեցան 1915-ի ապրիլ 8-ին, Վանի բանդի մէջ:

րական կազմի ղէմ մահափորձ ծրագրող խմբակի անգամ: 1915-ի ապրիլ 8-ին թիւրք ոստիկաններու ձեռքով խեղդամահ եղած է Վանի բանտի մէջ:

Արսաէս Սօլաքեան.— Ծնած է Վանի մէջ 1885-ին: Աւարտած էր Վանի Երամեան վարժարան, ուր և կը վարէր ուսուցչական պաշտօն: Միրանար գեղարուեստից և գրականութեան: 1909-ին Թիֆլիս գալով Գաբրիէլ Սուսուկեանի առանձին հոգացողութեան կարժանանայ և դերասանական խումբերու մէջ կը մտնէ, զարգացնելով իւր մէջ դերասանական արուեստը: Նա յաճախ երևցած է Վանի բեմերու վրայ, միշտ ալ յաջողութեամբ տանելով պատասխանատու դերեր: Ունէր ձեռագիր Թատերական աշխատութիւններ, որոնց մէջ կարևոր են «Աղբար Թորոսին Տնակը» և «Իտէալին Ճգնաժամը»: որոնք քանիցս ցուցադրուած են հասարակութեան: Դպրոցական և հասարակական ասպարէզներու մէջ բարեխիղճ ու համեստ գործիչ մըն էր: 1914-ին ձերբակալուելով Վանի բանտը տարուեցաւ. 1915-ի ապրիլի հերոսամարտին, Վանի բանտի 120 սպանուած կամ անհետացած հայ բանտարկեալներու մէջն էր նաև Արտ. Սօլաքեանը: Ազատուած են անոր բանտի յուշատետրերը:

Սաչաճուր Լեւոնեան.— Վանի գրական կորուսաններու մէջ առաջին տեղ կը գրաւէ Սաչ. Լեւոնեանը, որը 1915-ի գաղթին, մեռաւ Երևանի մէջ, անտեսական ծանր պայմաններու ենթարկուած: Լեւոնեանը ծնած է Վանի մէջ 1855-ին: Հետաքրքիր մանկական կեանք մը ունեցեր է: Ընդունակ, սրամիտ և խորամանկ պատանի մը եղած է:

Միջնակարգ կրթութիւն ստանալէ յետոյ, կը նուիրուի ինքնագարգացման, ձեռք բերելով գիտական մեծ պաշար: Դեռ երիտասարդ հասակէն կը նուիրուի գրականութեան, գրելով նախ վէպեր, ստանաւորներ, և ապա պատմական, ազգագրական, տեղագրական մեծածաւալ աշխատութիւններ, որոնցմէ «Աղթամար և Իւր Կաթուղիկոսութիւն» և «Մոռացուած էջեր կամ Փշրանքներ Տոհմային Պատմութեան» պակուեցան Իգմիրեանց մրցա-

նակով: Իբրև գաւառիկ դրող Լեւոնեանը կարևոր տեղ
կը գրաւէր: Աշխատակցած է թիւրքահայ բազմաթիւ թեր-
թերու, Ծիլվան, Լ. Տոսպուլնի, Գազիկէ ալյն ծածկա-
նուններով:

Ունէր ձեռագիր աշխատութիւններ, որոնք վերջին
աղէաներու ընթացքին ոչնչացան: Անխոնջ, յարատև և
համբերատար աշխատող մըն էր Լեւոնեանը, որ 30 տարի
հայ գպրոցական ու գրական ասպարէզի մէջ վասնեց
իւր եռանդը:

Յովհաննէս Կուլօղլեան.—Ծնած է Վանի մէջ 1860
թուին: Սովորած է Վարազայ Ժառանգաւորաց վարժա-
րանին մէջ: Ինքնաշխատութեամբ սովորած էր ֆրանսե-
րէն: Վարժ հայկաբան և քաջ գրաբառագէտ էր: Ունէր
ինքնուրոյն ստանաւորներ. կաշխատակցէր Վանի թեր-
թերուն «Իլեանա—Բահրուլ» ծածկանունով:

1896-ի Վանի կռիւներու վրայ յօրինած էր տաղա-
շափուած գեղեցիկ պիւցազներգութիւն մը: Երկար տա-
րիներ հասարակական և կրթական գործիչ եղած է:

Ղեւոնդ Սեւաւնձեան.—Ծնած է Վանի մէջ. կա-
րևոր դեր կատարած է ուսուցչական և հասարակական
ասպարէզներու մէջ: Գիտէր ֆրանսերէն, ռուսերէն և
տաճկերէն լեզուները: Վանի ուսական հիւպատոսի թար-
գմանն էր: 1914-ի ուս-թրքական պատերազմի նախօր-
եակին աքսորուեցաւ Փոքր-Ասիոյ խորքերը ուր, և անհետ
կորաւ:

Նեան Կալնեան.—Ծնած է Վանի մէջ: Հմուտ տաճ-
կերէնագէտ, քաջ օրէնագէտ, Վանի յայտնի փաստաբան,
որը 1914-ի վերջերը մեռաւ Էրզրումի մէջ:

Կարապետ Յարութիւնեան.—Ծնած է Վանի մէջ 1871-
ին: Միջնակարգ կրթութիւն ստանալէ յետոյ կանցնի Պօ-
լիս կը սովորի իրաւաբանութիւն, քանի մը տարի աշա-
կերտելով Գր. Զօհրապլին կը սովորի թրք. օրէնագիտու-
թիւն. յայտնի իրաւաբան էր: 1915-ի գաղթին մեռաւ
Իզմիրի մէջ:

Զարուհի Շալնեան.—Վանի իգական սեռի նշանա-

կալից կորուստներէն մէկը (1915,) որը առանցքը կը
հանդիսանար «Վասպ.ի կանանց Միութեան» որուն հա-
մար այնքան եռանդուն գործունէութիւն մը ցոյց տուաւ:

Վարդան Պապիկեան.—Վանի մտաւորականներու
մէջ, իւր պատուաւոր տեղն ունէր. լաւ կը տիրապետէր
ֆրանսերէն լեզուին: Համեստ, գործունեայ և խելացի
գործիչներէն մէկն էր՝ Հ. Ս. Ռամկավար կուսակցութեան,
որու Վանի կուսակցութեան օրգան «Վան-Տոսպի» զլիսա-
ւոր աշխատակից և խմբագիրն էր, պաշտօն մը, որը շատ
պատուաւոր կերպով վարեց երբ «Վան-Տոսպ»ը 1915-ի
վերջերը վերահրատարակուեցաւ Թիֆլիսի մէջ, մինչև
1918-ի գարնան, երբ Վարդանը հայութեան աղէտի մէջ
նետուեցաւ կամովին, իբրև հասարակ զինուոր և 1918-ի
ապրիլին Իզմիրի լեւնաշղթաներու վրայ*) սպանուեցաւ,
թողնելով աւանդ ձեռագիր յիշատակարաններ և ալյն:
Վարդանը իբրև հրապարակագիր և լրագրող վերջին տա-
րիներս շատերու և մամուլի ուշադրութիւնը գրաւեց:

Կոստա Համբարձումեան.—Կովկասահայ, զարա-
բաղցի: Անխոնջ ու եռանդուն հասարակական գործիչը,
որը ունեցած էր հետաքրքիր ու արկածալից կեանք մը:
Ստացեր էր բարձր, կրթութիւն և հմուտ զիւղասնտես
էր: Պատերազմէն յետոյ, 1916—1918 իւր գործունէու-
թեան դաշտը Վասպուրականը եղաւ, որուն հողին ու ժո-
ղովուրդին այնքան նուիրուեցաւ, որը և ի վերջոյ այդ ժո-
ղովուրդի փրկութեան ի խնդիր գաւաղիթ թիւրքերու ձեռ-
քով սպանուեցաւ Պարսկաստանի մէջ (Մանկալա) 1918-ի
յուլիսին**), երբ զիմաւորելու կերթար անգլական բա-
նակին: Վասպուրականի երկրորդ Խրիմեանն էր Կոստիան:

*) Այս կռիւներուն մեծ զոհեր և կորուստներ տուաւ Վան-
եան Բ-րդ գունաւը. քանի մը տասնեակ երիտասարդներ սպան-
ուեցան թիւրքերու զնդակներով: Հ. Ա.

**) 1918-ի գարնան երկարատև կռիւներէ յետոյ, երբ Վանի
և շրջանի հայութիւնը գաղթեց Պարսկաստան, այստեղ ևս հալած-
ուեցաւ թրք. բանակի կողմէ: Պարսկաստանի կռիւներու մէջ ըն-
կած գործիչներէն յիշատակելի են, մեր ձերուսագարդ բանաստեղծ

Բարունակ Կապուսիկեան.—Վանի երիտասարդութեան շարժիչ մեքենան կը հանդիսանար, ուր որ լինէր: Թէև միջսահարգ կրթութիւն ստացեր էր, բայց ինքնաշխատութեամբ գիտական, հասարակական, պատմական և այլն հարցերու վերաբերմամբ մեծ պաշար ունէր: Ժողովրդական գործիչ էր, բառիս բուն առումով: Երիտասարդ տարիքէն աշխատակից եղած է Պօլսոյ և Կովկասի հայ թերթերուն, «Հուր» և այլն ծածկանուններով: Վանի Հ. Յ. Գաղնակցութեան տեղական գլխաւոր գործիչներէն մէկը կը հանդիսանար: Իբրև հասարակական և յեղափոխական գործիչ, լրագրող, հրապարակագիր Բարունակը փայլուն ապագայ կը խոստանար: 1918-ի օգոստ. 27-ին խոլերայով մեռաւ Երևանի մէջ: Ծնած է Վանի մէջ 1885-ին:

Բ.

ԷՐԶՐՈՒՄ*)

Կոտորած, տեղահանութիւն և սոսկալի բռնութիւններ այնպիսի ահաւոր կերպով տեղի ունեցան Էրզրումի նահանգի մէջ, որ մարդկային լեզուն անգոր է պատմել: Տղամարդկանց մասսայական ջարդը, գեղեցիկ աղջկանց և կանանց առևանգումն և բռնաբարումը և ապա իսլամացումը, մեծ չափերով կատարուեցան: Հասարակական—յեղափոխական գործիչները կամ արքայապետներ և կամ սպանուեցան: Էրզրումի նահանգի հայութեան երեք մասը կոտորուած ու բնաջրնջուած է. ազատուողները եղած են ցանցառ թւով կանայք և երեխաներ, որոնք կը տառապին Միջագետքի խորքերը:

Յովհ. Թումանեանի որդին Արտաւազըր, բժ. Վարդանեան, Շատախցի Արմենակ Տէր Թովմասեան, մոկացի Համբարձում, շատախցի Պօզոս, բիթլիսցի Բերոբ և ուրիշներ: Հ. Ա.

*) Գաղթի, կոտորածի տեղահանութեան ահաւոր ծրագիրը հայկական նահանգներու մէջ, գրեթէ միևնոյն կերպով գործադրուած են, իթթիհատի դահիճներու և գերմանացիներու ձեռքով: Հ. Ա.

Բարձր—Հայքի ըմբոստ ու յեղափոխական սերունդը խաչուեցաւ իւր գողգոթայի վրայ:

Ազատուած և այժմ ողջ է Կարնոյ Սանասարեան վարժարանի տեսուչ յայտնի գիտնական գրագէտ—պրօֆ. Ս. Պաշատուրեանը: Սանասարեանի ուսուցիչներէն ազատուած են նաև Գէորգ Աբուլեան, նկարիչ Սարգիս Պաշատուրեան, Առաքել Պապաջանեան, որոնք ապաստաներ են Կովկաս: 1917-ի ամռան Կարնոյ մէջ մեռաւ պրօֆ. Տօնապետ Լիւլէճեանը: Կարնեցի երիտասարդ հասարակական—յեղափոխական գործիչներէն արքայապետ մէջ այժմ ողջ են. բանաստեղծ Արամ—Չարըզ, հասարակական գործիչ Ֆէրիտ Ճէմիլ, Կորիւն Չաքարեան, Դերենիկ Երկանեան, Սարգիս Մանուկեան, Գրիգոր Շահլամեան, Խաչիկ Փաստրամաճեան, Ղազար—Չարըզ, Օննիկ Զէօկիւրեան և այլն («Աշխատանք» 1919 № 2):

Տրապիզոնի—14,000 հայութիւնը թրքական անարգ ուժի մի գազանական կրքերուն զոհ եղաւ: Սև ծովը եղաւ Տրապիզոնի պատուական հայութեան անյատակ ու անյիշատակ գերեզմանը:

Ծանօթ.—Իժդարաբար մենք չը յաջողեցանք Էրզրումի, Բիթլիսի, Սարբերդի, Տիարբէքիբի և Մերաստիոյ նահանգներու մասին ալ կազմել համառօտ տեղեկագիր, ինչպէս ըրինք Վասպուրականի մասին: Յիշեալ հինգ նահանգներու մասին եղած տեղեկութիւններ (կոտորածի, տեղահանութեան և այլն) ցանցառ են. ակնաստեղծ վկաներ և գրաւոր յիշատակարաններ շատ սակաւ: Հ. Ա.

Գ.

ԲԻԹԼԻՍ*)

Հասարակական ու կրթական գործիչներ շատ նուազ էին Բիթլիսի նահանգի մէջ, եթէ Մշոյ աշխարհը բացառութիւն համարենք: Բիթլիսի նահանգի մտաւոր զար-

**) Բիթլիսի նահանգի կոտորածներու մասին 1916—1917 թուականներու ընթացքին Կովկասահայ մամուլի մէջ բազմաթիւ փաստեր և տեղեկութիւններ արձանագրուած կան:

գայման կեդրոնը Մուշն էր, իւր Ս. Կարապետ մենաստանով:

Բիթլիսի և Մշոյ թէ շրջանի և թէ քաղաքներու կոտորածները սոսկալի եղած են*), անլուր արհաւիրքներու ենթարկուեցաւ այս նահանգի ժողովուրդը, որու կէսէն շատ պակաս մասը միայն յաջողեցաւ ապաստանիլ Կովկասը:

Բիթլիսի յեղափոխական զոհերէն ծանօթ են մեզ հին գաշնակցական յայտնի գործիչ՝

Սլաւ — Արմենակ Յոխիկեան. — Մնած էր Բիթլիսի մէջ 1876-ին: Տեղոյն կեդրոնական վարժարանին մէջ միջնակարգ կրկութիւն ստանալէ յետոյ, կը նետուի յեղափոխական ասպարէզ, սակայն կը հալածուի և կանցնի Կովկաս, Պարսկաստան, միշտ ծառայելով Հ. Յ. Իաշնակցութեան գրօշակի տակ: Թրքական և Պարսկական զնտաններու մէջ, բազմիցս մաշեցուցեր է իւր երիտասարդական տարիքը, մինչև որ Օսմ. Մահմանդութենէն յետոյ կանցնի իւր հայրենիքը և կը շարունակէ հասարակական ու յեղափոխական գործունէութիւնը: 1915-ի մայիսին թիւրք զահիճներու ձեռքով կը կախուի Բիթլիսի մէջ, իբրև գաշնակցական գործիչ:

Նահատակ Արմենակին եղբայր Վաղարշապետ ազատուած է և այժմ կը շարունակէ իւր եղբոր գործունէութիւնը, Հայաստանի մէջ:

Մարգալես. — Իաշնակցական յայտնի գործիչ և թիւրքքահայ հասարակական կարևոր գէմքերէն մէկն էր սա, որը երկար տարիներով գործեր է Բիթլիսի շրջանի մէջ: Վերջերս մեռած է**): Նիսիբիսի մէջ: Տարագրութեան ընթացքին կախաղանէն ազատուելով անցած էր Սուլթանիէ և ասկէ Հալէպ: Ինքզինքը անապահով զգալով, Հաճի Հիւսէյին թրքական կեղծանուն կաննէ

*) Հետաքրքիր է նաև, Արամայիսի «Զարնուրելի Ռճիրը» (Մուշ և Սասուն) տպ. Բագու. 1916: Հ Ա.

***) «Աշխատանք» 1919 № 2.

վրան և կը պատրաստուի փախչիլ անգլիական բանակը (պրօֆ. Ս. Սաշատուրեանի հետ) բայց ճամբուն ձիւն վար կիյնայ, կուշաթափուի և կը մեռնի...: «Մօլլա մը և շորս դադաղակիրներ թուրքական գերեզմանոցին մէջ կը թաղեն Նիսիբիսի Հաճի — Հիւսէյինը» — Մարգալեսը:

Գ.

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Կոտորածն ու տեղահանութիւնը ահաւոր կերպով կատարուած են եղեր նաև Տիգրանակերտի նահանգի մէջ: Այս շրջանէն ազատուողները և Կովկաս ապաստանածները մատի վրայ կը համարուին: Տիգրանակերտի նահանգի հայութեան բնաջնջման մասին ցարգ ու է յիշատակութիւն չը կայ: Յեղափոխական ու հասարակական կեանքը բաւական թափ ու եռանդ ստացած էր այս նահանգի մէջ: Նոր գաղափարներով եռանդուն սերունդ մը յառաջացեր էր, որը սակայն կենդանի նահատակ եղաւ իւր ընդգրկած գաղափարի և յոյսերու արիւնոտ ուղիին վրայ:

Ե.

ԽԱՐԲԵՐԳ*)

Հայկական վեց նահանգներու մէջ Սարբերգը զլիաւոր տեղ կը գրաւէր. կրթական ու հասարակական կեանքը այստեղ մեծ թափով կը յառաջագիմէր: Սարբերգի մէջ կային բարձրագոյն կրթական հաստատութիւններ, որոնց մէջ կը դասախօսէին պրօֆէսօներ:

Պրօֆ. Սաշատուր Որբերեանը, Սարբերգէն աքսորուած է Միջագետք: Անլուր չարչարանքներով սպանուած են Սարբերգի շրջանի Իաշնակցական յայտնի գործիչներ՝

*) Սարբերգի նահանգի կոտորածներու և տեղահանութեան մասին եղած տեղեկութիւններն ալ շատ սակաւ են: Կոտորածներէն և աքսորէն ազատուած ու Կովկաս եկած արիւ. Երուանդանուշ Կիւրճեանի ականատեսի պատմածները գրի առած և հրատարակած է Հայկ Աճէմեանը «Աշխատանք» թերթի մէջ, 1917 № 82, 83, 84:

ուօքթ. Նշան, Կարապետ Պոյաճեան, պրն. Փան, Ընկեր Կարօ, Եսուարդ Թաշճեան, Աստիկեան, Սէմէրջի Արթին, (հնչակեան) և այլք:

Պարբերդ քաղաքէն և զիւղերէն առաջին անգամ խումբ խումբ կը կոտորեն 350 ազամարդ:

1915-ի յուլիսի 10—22 տեղի կունենայ Պարբերդի նահանգի հայութեան տեղահանութիւնը, Տիգրանակերտի վրայով դէպի Ուրֆա և ասկէ Միջագետքի խորքերը, Տէր-Ձօր, Հալէպ և այլ ուր:

2.

ՍԵՐԱՍՏԻՍ

Հայկական վեց նահանգներէն՝ Սերաստիա այն մեծ ու աչքաուռ երկրամասն է, որը թէ ի հնումն և թէ վերջին տասնեակ տարիներու ընթացքին թիւրք կառավարութեան ուշադրութիւնը գրաւած է, իբրև հայկական խիտ կեդրոն և յեղափոխական ու հասարակական շարժումներու օրրան*):

Վերջին աղէտի ընթացքին Սերաստիոյ նահանգի հայութիւնը կրեց ու տեսաւ այն տանջանքն ու նահատակութիւնը, որուն ենթարկուեցան նաև միւս նահանգներու հայերը:

Հասարակական, յեղափոխական, գրական բազմաթիւ անձնաւորութիւններ սպանուած և անհետ կորած են այս շրջանէն: Բանաստեղծներ Սիւսանթոն և Վարուժան, բժ. Տաղաւարեան, Հմբ. Պոյաճեան—Մուրատ (որոնց անունները յիշատակուած են Օ... Արքեպ.-ի տեղեկագրի մէջ. էջ 15, 20) Սերաստիոյ հայութեան կարևոր կորուստ:

*) Թէև պիտի ըսել, որ այս ուղղութեամբ հայկական նահանգներու մէջ Վասպուրականը եղած է ամենէն աւելի եռանդուն, ազմկարար և փոթորկալից: Յեղափոխական ու հասարակական կեանքն ու շարժումները դեռ 1850-ական թուականներէն ուժեղ թափ ստացան Վասպուրականի մէջ մինչև 1918 թիւր:

Հ. Ա.

ներէն են, որոնց թիւը շատ է թէև, բայց մենք ստիպուած կը յիշատակենք քանիներու անունները, քանի որ միւսներու մասին չը կրցանք տեղեկութիւններ ձեռք բերել:

Փագիկ Օղանեան.—Ծնած է Սերաստիոյ նահանգի Մարզուան քաղաքի մէջ 1882-ին և սովորած է տեղոյն Ամերիկեան բարձր. քօլէճը, ուր տարիներով կը ստանայ կանոնաւոր կրթութիւն, կատարելապէս արապետելով թիւրքերէն և անգլերէն լեզուներուն:

Մարզուանի կրթական և հասարակական կեանքի մէջ կարևոր դեր կատարած է, իբրև ուսուցիչ և հասարակական գործիչ հիմնելով միանգամայն «ժողովրդական ազատ լսարանները»: Փագիկ Օղանեանը իբրև գրական գործիչ ևս պատուաւոր անուն թողած է:

1912-ին կը հիմնէ «Հայկունի»*) ամսաթերթը— «Հանդէս սկսնակ գրողներու»—որուն սկսնակ գրողներէն զատ կաշխատակցէին նաև բազմաթիւ գրական յայտնի անձնաւորութիւնները: Օղանեանը աշխատակցած է նաև պօլսահայ ու գաւառիկ բազմաթիւ թերթերու, պատմա-գրական, հասարակական և այլն հարցերու շուրջ յօդուածաշարքեր գրելով:

Իւր «Հայապատում» գիրքը**), որը պատկուած է Իգմիրեանց Ա. մրցանակով, ուշադրութեան արժանի երկասիրութիւն մըն է: Բաւական արժէքաւոր աշխատանք է նաև անոր «Պատմութիւն Հայ Լեզուի և Բանահիւսուցիչեան» խորագրով գիրքը***): Թիւրքահայ գաւառիկ գրականութեան կարևոր կորուստներէն մէկն է Օղանեանը, որու մահուան մասին տեղեկութիւն սուղը եղաւ Թիֆլիսի «Փաղափար» թերթը (1916 դեկտ.): Օղանեանը Հնչակեան կուսակցութեան կարևոր գործիչներէն մէկն էր:

*) «Հայկունի»ն բոլորեց երեք տարուայ հրատարակութեան շրջան մը. 1911—1913:

***) Տպ. Մարզուան. 1912. էջ 300.

***) Տպ. Մարզուան. 1913. էջ 367.

Մարզուանի գրական կորուստներու մէջ կարժէ յիշատակել նաև՝

Մամիկոն Վարժապետեանը, որը Օսմ. Մահմանգրութենէն յետոյ Մարզուանի մէջ յառաջ բերաւ սկսնակ գրողներու հետաքրքիր շարժում մը, հիմնելով «Բողբոջ» ամսաթերթը:

Մ. Վարժապետեանը հրատարակած է նաև «Կաթիլներ», «Սլքոյին Նախնիներ», «Հայկական Նոր Եկեղեցի», «Ասուխներ» և այլն գրքոյկները: (Տպ. Մարզուան):

Շաքին—Կարանիսարի (Սերաստիոյ նահանգը) երիտասարդութիւնը 1915-ի ամռան շուրջով կոտորուիլ, դիրքերու և պատնէշներու վրայ դէնք ի ձեռին, անեղ զիմադրութիւն և սքանչելի դիւցազնամարտ մը ցոյց տուաւ, թէ և ի վերջոյ պատուով նահատակուեցաւ: Այդ երիտասարդութեան լաւագոյն ներկայացուցիչները հանդիսացեր էին, Ղուկաս, Վահանիկ Հիւսիսեան, Հմայեակ և Լևոն Գարակեօղեաններ, Նիկողոս և Շապուհ Օզանեաններ, Ռաֆայէլ Օտարաշեան, Վահրամ Լէպէպիճեան, Գարեգին Թաշճեան, Հմայեակ Մարկոսեան, Նիկողոս և Գառնիկ Մարկոսեաններ, Սևազ Տուրիկեան, Անդրանիկ և Հմայեակ Սէրճանեաններ, Ռուբէն Ղարապիպէրեան, Միհրան Էնֆրանճեան, Երուանդ, Միհրան, և այլն և այլն: Կարժէ յիշատակել նաև 1918-ի մայիսի 28-ին Բաշ Ապարանի (Երևանի նահանգ) ճակատամարտի մէջ նահատակուած Ազարիկը և 1919-ի յունուար 16-ին Երևանի մէջ դաւադրութեամբ սպանուած Նշան Գիւլբաշեան Շաքին—Գարանիսարցիներու անունները:

Սերասացի Մուրաս.—Յեղափոխական սերունդի գլխաւոր և անձնուէր ներկայացուցիչն էր Սերաստիոյ Կովտուն գիւղացի Մուրասը, որը երկար տարիներով եղած է յեղափոխական, զինուորական ասպարէզներու մէջ:

Մանօր.—Մարզուանի Ամերիկեան քօլէճի մէջ կային քանի մը հայ պրօֆէսորներ, որոնց մասին դժբաղտարանը չը կրցանք տեղեկութիւններ ձեռք բերել: Թէև որոշ է որ Սարբերդի, Մարզուանի, Այնթապի Ամերիկեան քօլէճներու պրօֆէսորները մեծ մասով սպանուած և անհետացած են: Լ. Ա.

Գլխաւոր և սիրելի գործակիցն էր Անդրանիկին: Անոր գերագոյն ջանքերու շնորհիւն էր որ 1918-ի յունուարին կը պահուէր Երզնկայի ճակատը, խումբ մը նուիրուած զինուորներով: 1918-ի փետր. էրզրումի շարադէտ նահանջէն յետոյ Մուրասը անցաւ Կովկաս, գնաց Բագու, ուր վարձեալ մարտական խումբերու զլուխն անցաւ, դէմ դնելով թրջական գրոհներուն, Բագուի գոններուն առջև: Այդ անաւոր ճակատամարտներու մէջ հերոսի վայել քաջութիւններ ցոյց տալէ յետոյ սպանուեցաւ Մուրասը:

Վ.Ա.ՍՊՈՒՐԱ.ԿԱՆԻ՛ ՄԵԾ Գ.Ս.ԼԹԸ

1915 յուլիս 19—31

Վասպուրականի 1915-ի յուլիսեան մեծ և աղէտալի գաղթի սրտամութիւն գրելը խիստ ծանր ու դժուարին գործ մըն է, իւր բոլոր մանրամասնութեամբ, ինչ որ մեր նպատակէն դուրս է: Այստեղ մենք կը ներկայացնենք միայն գաղթէն յետոյ, գաղթականութեան կեդրոն և աղէտի ու տառապանքի վայր էջմիածնի վանքի և Վաղարշապատ գիւղի մէջ բազմատեսակ վարակիչ հիւանդութիւններով մահացող Վասպուրականցիներու վեց ամսուայ չորս վիճակագրութիւնը, ամսէ ամիս, (28 յուլիս—8 օգոստ. 1915):

Այն սրտամական փաստաթուղթը, որ մեր ձեռքի տակ կը գտնուի, կը ներկայացնէ վեց ամսուայ մէջ մահացողներու գրեթէ ճշգրիտ վիճակագրութիւնը, որը շատ քիչ տարակուսանքի տեղի կուտայ, մանաւանդ, որ մենք համեմատեցինք մահացողներու քանի մը վիճակագրական տախտակներու հետ և գտանք որ ըստ շամենայնի մեր վիճակագրութիւնը ճշգրիտ ըլլալու ասպացոյցներ ունի:

Մեր ձեռքի տակ եղած վիճակագրական տեղեկագիրը կը բաղականայ 40 մեծադիր էջերէ: Ինչպէս յայտնի կրնէ տեղեկագիրը կազմուած է այնպիսի մէկու մը ձեռքով, որ յատուկ լրագորուած է եղեր, օրէ օր միայն մահացողներու վիճակագրութիւնը կազմել, և այս է պատճառ որ

նախ, որոշակի գրուած է իւրաքանչիւր օրուայ մէջ մեռնող ազամարդկանց, կանանց և երեխաներու թիւը, տարիքներով հանդերձ, ապա երբեմն ալ մեռնողներու անուն ազգանուն, որտեղացի լինել, տարիք և այլն (14 էջ): Իսկ երբ մեռնողներու թիւը օրէ օր շատցեր է, այլևս անհնարին եղած է յականէ յանուանէ արձանագրել, ուստի և զարձեայ շարունակուած է միայն որոշել ազամարդկանց, կանանց և երեխաներու ընդհանուր թիւը, զատ զատ:

Տեղեկագիրը իւր բոլոր մանրամասնութեամբ հրատարակելը աւելի հետաքրքիր ու արժէքաւոր պիտի լինէր, բայց դժբաղտաբար նիւթական և տպագրական ներկայ ծանր պայմանները արգելք եղան, ուստի և ընդհանուր գաղափար մը կազմելու համար, առ այժմ կը բաւականանանք հրատարակել մահացողներու միայն ամսական վիճակագրութիւնը:

Վասպուրականի մեծ գաղթի (1915 յուլիս) ընթացքին էջմիածնի վանքի և Վաղարշապատ գիւղի մէջ մահացող վասպուրականցիներու վեց ամսուայ վիճակագրութեան եզրակացութիւնը.

28-31	Յուլիս	1915	Մեռած են	261	անձ
1-31	Օգոստոս		»	5003	»
1-30	Սեպտեմբեր		»	2295	»
1-31	Հոկտեմբեր		»	351	»
1-30	Նոյեմբեր		»	181	»
1-8	Դեկտեմբեր		»	35	»
			ընդամենը՝	8126	անձ

Ծանօթ.—Պրն. Բաշխի Իշխանեանի «Ազգային և տառապանքի աշխարհից» (տես «Մշակ» 1915 № 203-ի նախորդ և յաջորդ յաջորդ համարները) յօդուածաշարքերու մէջ, օգոստ. ամսուայ ընթացքին մեռածներու օրական վիճակագրութիւնը գրեթէ համապատասխան է մեր ցուցակին, տարբերութիւնը շատ աննշան է:

Հ. Ա.

Տեղեկագիրը կազմողի անունը չըկայ գրուած, այլ շապիկի վրայ շաղատառերով գրուած է հետևեալը. «Արձանագրութիւն Վաղարշապատ մեռած հայ փախսականներին. 1915 թ. յուլիս 28—դեկտ. 8»:

Այս խիստ կարևոր ու պատմարժէք տեղեկագիրը դժբաղտաբար, ըստ արժանւոյն պահուած չէր էջմիածնի եղբ. Օգն. Յանձնաժողովի արխիւի մէջ, սկիզբէն, և օր մը, 1917-ի վերջերը, միայն տարօրինակ կերպով մենք գտանք էջմիածնի պահեստներէն մէկուն մէջ, անպէտք թուղթերու հետ խառնուած:

* *

Մահացութիւնները աւելի արագ եղած են օգոստ. ամսոյ մէջ. օգ. 12-ին մեռած են՝ 132, օգ, 22-ին՝ 267, 23-ին՝ 192, 24-ին՝ 283, 25-ին՝ 264, 26-ին՝ 250, 27-ին՝ 334, 28-ին՝ 216, 29-ին՝ 357, 30-ին՝ 306, 31-ին՝ 290: Սեպտեմբեր 1-էն սկսեալ մեռնողներու թիւը աստիճանաբար կը նուազի այնպէս, որ սեպտ. 20-էն յետոյ օրական մեռնողներու թիւը 25—30-ի կը հասնի և այսպէս կամաց կամաց մահացութեանց դէպքերը կը դատարեն, մինչև զեկտեմբերի սկիզբները, երբ այլևս մեռնողներու թիւը շատ ցանցառ կը լինի:

Որքան ալ յիշեալ վիճակագրական տուեալները ճիշտ լինին, այնուամենայնիւ մեռնողներու թիւը շատերու վկայութեանց համաձայն աւելի է, եթէ միջին թիւ վերցնենք, 10,000-ի կը հասնի, թէև ըստ ցուցակի, 8126 է:

Անտէր և մոռացուած այդ մարդկային զիակաւոյտերը էջմիածնի մէջ գործող (գաղթի ընթացքին) հասարակական հիմնարկութեանց համաձայնութեամբ կը թաղուին էջմիածնի ներսէսեան անտառի հարաւակողմի ծայրը, բայց տարածութեան մը վրայ, ուր ամսէ ամիս կը կազմուի եզրայրական մեծ գերեզմանոց մը: Այդ դժբաղդ գոհերը միասին թաղուած են, հարիւրներով, հազարներով մէկ փոսի մէջ, կողք կողքի, իրարու վրայ կուտակուած, զանազան գիրքով: Հայ գաղթականի հաւատքը այդ գե-

րեզմանափոսերու մէջն է որ անտեսուած ու անպաու-
ուած է: Մեռելի երեսը, ժողովրդական հաւատքով զէպի
արևելք, զէպ աղօթարան պէտք է դարձուած, և այդ
զիրքով ալ թաղուած լինէր, բայց այդպէս չէ. զէպի
հարաւ կը նայեն անոնց երկարաթումբ գերեզմանները:

Քսաներեք երկար թումբեր են կողք կողքի շարուած,
30—60 քայլ երկարութեամբ, իսկ ամբողջի երկարու-
թիւնները եթէ չափելու լինենք կունենանք 1300 քայլ
կամ 4900 սաք երկարածիզ գերեզմանոց մը, որու լայնքը
միայն երեք քայլ է: Կողքի կողքի գրուած են երկու կամ
երեք մեռել, իսկ իրարու վրայ կուտակուած են 3, 4
կամ հինգ հոգի: Այդ անտապան, անարձան, ու անյիշա-
տակազիր գերեզմանաթումբերու վրայ կան միայն չորս
անպաճօյճ գերեզմանաքարեր, հետևեալ մակագրութիւն-
ներով. 1) «ԹՎ-1915. Տ՛ր. Ա՛ծ. Յ՛ս. Ք՛ս. ողորմեա
այս տապանի նընջ՛եալ Կալանդ՛ր»: 2.) «1915 ՝ Հայ-
եաստ՛ն. Ոսկօ».

Այս համայնական գերեզմանոցին վրայ եղբայրական
յուշարձան կանգնեցնելու համար, էջմիածնի Եղբ. Յզն.
Յանձնաժողովի տրամադրութեան տակ կայ յատուկ գրա-
մագրութի մը, որը ի հարկէ ապագային պիտի գործադրուի
իւր նպատակին:

ԿԱՐԵՒՈՐ ՅԱԻԵԼՈՒՄՆԵՐ

Իրքի սպագրութիւնը վերջանալու ժամանակ միայն մեր
ձեռքն անցաւ հետևեալ անուանացուցակը, որը կը ներկայացնէ
յիշատակութեան արժանի մեր զոհերու անունները:

Երգում.— «Յառաջ» թերթի աշխատակիցներ Մարուզէ Մա-
րանձեան, Վահէ Թորանեան և Փիլոս (Մարալ) աքսորուածներ,
Հայկ. կամաւորական Դ-րդ գնդի հրամանատար Քեռի (Արշակ)
սպանուած Ռեանգուզի ճակատամարտի մէջ:

Իլիմիւսիանե.— Կայծակ—Առաքել աղա, 1917-ին մեռած
Երզնկայի մէջ, Աւօ (գիւմրելիականի Աւետիս) 1917-ին մեռած
Բաթումի մէջ, երկուքն ալ զաշնակցական հին զործիչներ:

Բիրիլա.— Արսէն Վարժապետեան, Պատուելի Թաշիկ, ուր-
տախցի Կարապետ, Շամիրամցի Սողօն սպանուած են: Սուրատ
և Յակոբ մեռած են փախուստի ճամբուն: Ամերիկացի— հայասէր
Մըստր Նաիր, մեռած է աքսորի ճամբուն, թունաւորուելով թիւր-
քերու ձեռքով:

Մուս.— Սասուն.— Մուշի և Սասունի 1915-ի զիմադրական
կռիւններու ընթացքին սպանուած են յայտնի զաշնակցական զոր-
ծիչներ Կորբն, Հածի Յակոբ, Մկրտիչ Պօղօեան Աէմալցի Մա-
նուկ, Աւետիս Զանկեօղեան, Մաթոս (Կովկասահայ) և ուրիշներ:

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Տպուած է	Պատկ. կարգալ
էջ	
14. կր կաշխատակցի	Կաշխատակցի
16. «Աստուածներ»	«Սուրատներ»
25. «Ազգայնագրութիւն»	«Ազգայնագրութիւն»
31. 19-րդ սուղէն յետոյ կարգալ՝ «13. Աւետիս վրդ. Կուրօպեան, Լիմ-Անապատի միարան, սպանուած Պարսկաստանի մէջ 1918-ի ամսան»:	
31. Ծանօթութեան 9-րդ սուղէն յետոյ կարգալ՝ «Վանքում վրդ. Կանաչեան, Կաուց-Անապատի միարան, այժմ Պարսկաստան»:	



ԻՄ ԳԻՐՔԵՐԸ

	Գ ի ն	Բ.	Կ.
1. ՄԳԱՊՍԱԿ ԻՇԽԱՆԻ. (պատկերազարդ), Թիֆլիս. 1916. տպ. օր. ն. Ազանեսանցի. 52 էջ. (սպառած)	2	—	
2. ՆՈՅՆԸ Բ. ապագրութիւն (սպառած)	2	—	
3. ԾԱՂԿԱՔԱՂ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ. Առաջին փուլը. Ս. էջմիածին. 1917. տպ. Մայր Աթոսոյ. 104 էջ.	4	—	
5. ՀԱՅՐԵՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ. Ա. Դէպի Նա- րեկայ վանքը. Ս. էջմիածին. 1918. տպ. Մայր Աթոսոյ. 16 էջ.	1	50	
5. ԹԻՒՐՔԱՀԱՅ ԱՂԷՏԸ. Տէր Մ... Արքեպ. Օ...ի ՏԵՂԵԿԱԳԻՐԸ. Ս. էջմիածին. 1919. տպ. Մայր Աթոսոյ. 48 էջ.	5	—	



Ստանալու համար գիմեյ՝
Հայկ Անէմեան — էջմիածին
Caucase. Etchmiadzin. Hark Adjemian

Հայաստանի Ազգային գրադարան



NL0422651

17063

